



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ.	Փակումն կաւկասիոյ հայ վարժարանաց, — Դոնդու-	Պ. Տ.
ԳՐԱԿԱՆ.	Կով—կորսակովի յայտարարութեան առթիւ...	Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՅ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ.	Ինչն-բոյս ծաղիկներ.....	ՕՐ ***
ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ.	Կիչեօմ տը Հումալօլտ և Շարլօթ Տիէտ.....	ԵԱՆԳԻՆ
ԴԻՏԱԿԱՆ.	Կրօնական պաշտամունք խուլ համբերութեամբ...	ՀԱՍԿԱՔԱՂ
ՔԱՂԱՔԱՆ ՇԱԲ. ԼՐՈՑ	Յուդայի զանազան արագուստներ.....	Մ. ՉՕՊԱՆԵԱՆ
ՍԻՄՕՆԵ ԵՒ ՄԱՐԻ	Արտաշէս, Ներսէս, Ազգային.....	
	(Կղզիէ տը Մօլթէքէն) Թարգմ.....	

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
»	վեցամսեայ.....	Քառ » »
Գաւառներ	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դան. արծաթ
Մէկ թերթին գինն է.....	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ



Խմբագրութիւն Արեւիք և Մասիս լրագրաց
խմբիւն, Երևանի խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

ԴՐԱՐԱԿԱՆ

ՂԱՆԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

Ղալաթիա. 12 Ապրիլ

3 աժիւ Լոնտայի վրայ պանքայի)		111
3 » » » (վճռակնն)		110 5/8
3 » Բարիւի » (պանքայի)		22 82 1/2
3 » » » (վճռակնն)		22 90

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բոսնոյիտե

Երեկ երեկոյ գոց. (Դիւց. D. Սէրի	46 35
Պօրտային գոցուելէն վերջը »	46 38
Բերայի մէջ »	—
Աւաւտուն բացուեցաւ »	46 36
Բարձրագոյն գին »	46 37
Նուազագոյն »	46 34
Կէս օրին »	46 34 1/2
Փոխաւթիւն 1858) A. Սէրի Գ. Կ. Ա. Ո. 28	
» 1862) B. » » » 47 5	
» 1860) » » » »	
» 1863) C. » » » 46 35	
» 1872) » » » »	
» 1865) » » » »	
» 1869) » » » »	
» 1873) » » » »	

Իւնիֆիէ Եգիպտական

Երեկ երեկուն գոցուեցաւ	68
Այս առտու բացուեցաւ Գ. Կ.	67 30
Կէս օրին	67 30

ԲԱԺՆԵՏՈՐՍԻ

Սօրիթէ Ժէնէրալ..... Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 7
Քսէտի Ժէնէրալ..... » » Օսմ. »	5 5
Պանք տը Գոնս..... » » » »	6 23
Սօս. Շանժէ վալէօր..... » » » »	3 25
Թրամուէյ..... » » » »	265
Բուսէլիի երկաթուղի..... Ֆր.	42
Օպիկուսիօն տը Բրիթիթէ..... »	375
Բաժնեթուղթ Լաւրիօմի..... »	65

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի..... 772...	100
20 ֆրանկոց..... » ...	87 28
Անգլիական ոսկի..... » ...	110 26
Բօլ Իմբէրիալ..... » ...	90 13
Քրիմից..... » ...	51 15
Ռուսի թղթադրամ..... » ...	9 22
» արժաթ..... » ...	89 25
Ֆրօրին..... » ...	8 38
Մէք. արծ. (տարբ.)..... » ...	108
Վեցնոց..... » ...	102 20
Հինգնոց..... » ...	102 21

Մէթալիք..... » ...	99
Պղինձ..... » ...	—
Բոլթադրամ..... » ...	—

ԵՐԲՈՎԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 23 Ապրիլ, ժամ 5 վայր: 45	Երեկոյ
Անգլ. քոնսօլիտէ.....	95 1/8
Ռոսի. » Սէրի Գ. բացուեցաւ	15 1/2
» » » գոցուեցաւ	15 1/2
» » » Ա. »	28
» » » Բ. »	17 1/4
» » » Գ. »	15 1/2
Օթօման 1871.....	60 3/4
Փոխաւթիւն 1877.....	74 1/2
Պանք Օթօման.....	11 1/2
Ռուսական փոխաւ. 1873.....	84 3/4
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ).....	60 3/8
» առանձն. (բրիվիւէժիէ).....	78 1/4
Տայրա Սանիէ.....	55 1/2
Տօմանիալ (փոխաւ. Բօլիւտ).....	77
Հուսգարական պարտաթուղթ 40/0.....	—
Փոխաւթիւն Բարիդի վրայ.....	—
Վիէննա, 23 Ապրիլ, ժամ 4 Երեկոյ	
Փոխաւթիւն Լոնտոնի վրայ.....	126 70
Օսմանեան երկաթուղի.....	20 50
Բարիլ, 23 Ապրիլ, ժամ 3 վայր. 45	Երեկոյ
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0..... բաց	108 10
» » 3 0/0.....	78 7 1/2
Օսմանեան քոնսօլիտէ Սէրի Գ. բացուեցաւ	15 77 1/2
» » » գոցուեցաւ	15 67 1/2
» » Սէրի Բ. »	17
» » Գ. »	15 60
Օսմանեան երկաթուղի.....	42 50
» Բէժիի բաժնեթուղթ.....	—
Պանք Օթօման.....	537 50
Գրէտի Լիօնէ.....	527 50
» Ֆոնսիէ.....	1305
Բաժնետոմս Լիօնի.....	1266 25
Սուէզի ջրանցք.....	1965
Ռուսական 5 0/0 1877ի.....	83 1/2
Խաւրական Ռանթ.....	92 37 1/2
Եգիպտական միացեալ.....	367 50
Սպանիական (արտաքին).....	57
Բրիթիթէ Բրիւք.....	308 50
50/0 Հիլլէնական.....	339 37 1/2
2էք Լոնտայի վրայ.....	25 39

ԲԱՐԻՁ ԲԹԻԹ ՊՈՐՍԱ

Ապրիլ 23, ժ. 10, 4 30	
Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0.....	108 20
Օսմանեան ».....	15 72 1/2
Եգիպտական միացեալ.....	308 50

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂ ԱՔԱԿԱՆ

ቅጽ 3765

Քանի մը ոռոս թերթերը այս պարագայի մէջ բաւականին ծառայութիւն մատուցին Հայոց • այսպէս օրինակի համար Կաւկասիոյ կառավարութիւնն իւր պաշտօնական յայտարարութեան մէջ կ'ըսէր թէ 1874ի օրինաց համեմատ հայ եկեղեցական ուսումնարանաց թեմական տեսուչները կամ առաջնորդները պարտաւոր էին Կաւկասիոյ կառավարութեան եւ ուսումնական իշխանութեան հաղորդել հայ վարժարանաց թուոյն , դասատուներու մտաւոր կրթութեան եւ հրատարակութեան մասին , թէ այս օրէնք Գէորգ Դ. Կաթողիկոսն եւս ընդունած եւ Կաւկասիոյ կառավարութեան տեղեկադրած էր , եւ յայտարարած էր թեմական առաջնորդաց որպէս զի 1874ի օրինաց այդ կէտը կատարեն եւ հարկ եղած տեղեկութիւններն իւրաքանչիւր տարի գրեն ուսումնական իշխանութեան եւ Կաւկասիոյ կառավարութեան • բայց մինչեւ այժմ օրինաց այդ կէտը կատարուած չէ , եւ ո՛չ մէկ թեմական առաջնորդ ուսումնարանաց թուոյն եւ ուսուցիչներու մասին հաղորդած է ուր որ հարկ է : Դռնդուկով—Վորսակով իշխանի յայտարարութեան այս կէտն—որ կը ծառայէ իրբն զօրավոր փաստ մը հայ հոգեւոր իշխանութեան իրեն պարտականութենէն չեղիլը ցուցնող , հետեւաբար եւ աւելի ազատ իրաւունք ստուղ հայ ուսումնարանաց դրաման համար — հիմնովին սուտ է , ինչպէս կ'ապացուցանեն Վրաստանի եւ Իմերէթի թեմի 1875-71ին Հայոց ուսումնարանաց մէջ թեմական տեսչի պաշտօն կատարող Յակոբ

Տէր Յովհաննէսեանի — որ այժմ Մոսկուայի կայսերական համալսարանի իրաւագիտութեան կանդիտատ է — եւ ներկայ թեմական տեսուչ Ղազարոս Աղայեանի Նովոյե Աբաշէնի մէջ հրատարակած նամակներն, զորս հարկ կը դատենք յառաջ բերել աստ .

« Գրեթէ երեք տարի, 1877-79, Վրաստանի եւ Խմէրէթի Հայ-Լուսաւորչական թեմի եկեղեցական դպրոցներու թեմական տեսուչ եղած եմ: Չուզելով որպէս զի օրէնքն չը կատարելու ծանր ամբաստութիւնն իյնայ իմ վրայ եւ ամեն տեսակ թիւրիմացութիւններ վանելու համար, պարտք կը համարիմ յայտարարել թէ 1875 թ. էն սկսեալ մինչեւ 1879 տարին օրէնքի հրամայած հաշիւներն միշտ կը ներկայէի պետական ուսումնարանաց վարչութեան: Այս բանն ապացուցանելու համար յառաջ կը բերեմ այն տեղեկագրոց թուականները զորս ներկայացուցած եմ, որք են 31 դեկտեմբերի 1875 թիւ 242, 4 փետրուարի 1876 թիւ 22, 27 դեկտեմբերի 1876 թիւ 171, 20 յունուարի 1876 թիւ 17, 25 դեկտեմբերի 1878 թիւ 229, 14 փետրուար 1879 թիւ 15: Ասոր հետ միասին կ'աւելցնեմ որ այդ տեղեկութիւններն ո՛չ միայն պետական ուսումնարանաց վերատեսուչներուն, այլ նաեւ ոստիկանութեան տեսուչներուն ալ հաղորդած եմ: Բաց աստի Ամենայն Հայոց Աթոռի կողմի հաստատած կանոնադրութեան 22րդ յօդուածի զօրութեամբ եւ որպէս թեմական տեսուչ հայ վարժարանաց մանրամասն հաշիւները թեմական առաջնորդին կը ներկայէի, իսկ թեմական առաջնորդն եւս մի եւ նոյն կանոնադրութեան 25րդ յօդուածի համեմատ սոյն հաշիւները Էջմիածնայ Սինոդն կ'ուղարկէր: Պետական ուսումնարանաց վարչութեանց ներկայացուցած հաշիւներու մէջ օրինաց համաձայն նշանակուած էին երկուսն աւելերաց թիւն, ուսումնարանաց պահպանման աղբիւրները, ուսուցչաց անուններն հանդերձ նոցա մտաւոր զարգացման աստիճանն ցուցնող պարագայներով եւ: Բաց աստի 1879ի փետրուար 14ին պետական ուսումնարանաց վերատեսուչին ներկայեցի տեղեկագիր մը որոյ մէջ նշանակուած էին իմ իշխանութեան ներքեւ ե-

« զող ուսումնարանաց թիւը, անոնց ո՛ր փողոցի մէջ գտնուիր, տուներու թուականները եւ տան տէրերու ազգանուններն: »

« Մոսկուայի կայսերական համալսարանի իրաւագիտութեան կանդիտատ »

ՅՈՒՈՒՄ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ»

Պ. Տէր Յովհաննիսեանի օրինակէն ներկայ տեսուչ Ղազարոս Աղայեան Նոյնպէս համարձակութիւն ստանալով, ինքն եւս կը համարձակի հրապարակ հանել Վաւկասիոյ կառավարութեան պաշտօնական յայտարարութեան այդ կտորի ստույգութիւնը .

« Նովոյե Աբաշէնի 413 թուոյն մէջ կարգաւ Պ. Յակոբ Տէր Յովհաննիսեանի նամակը, եւ Նոյնպէս չեմ ցանկար որ օրէնքն չկատարելու ամբաստանութիւն իյնայ վրաս, ուստի պարտք կը համարիմ յայտարարել որ լնչպէս նախորդիս՝ Պ. Գէորգ Բարխուդարեանցի, Նոյնպէս եւ իմ պաշտօնավարութեան ժամանակ Հայոց եւ Եկեղեցական ուսումնարանաց կացութեան մասին միշտ հաշիւներ կը ներկայացուէին պետական ուսումնարանաց վարչութեանց: Եւ հանրային կրթութեան նախարարութեան: Նմանօրինակ հաշիւներ ուղարկուած են Թիֆլիսի պետական ուսումնարանաց վերատեսուչին 1880 ի յունուար 11 ին, 1880 ի փետրվար 14ին, 1882 ի յունուար 20ին, 1883 ի յունուար 15 ին, 1883 ի դեկտեմբեր 10 ին: Հանրային կրթութեան նախարարութեան ներկայացուցած հաշիւներէն զոտ թեմական տեսուչութիւնը Հայոց եկեղեցական դպրոցներու մասին կառավարութեան բոլոր պահանջած տեղեկութիւններն հաղորդած է իրեն: Այսպիսի տեղեկութիւններ հաղորդուած են Թիֆլիսի նահանգապետին 1883ի ապրիլ 20 ին եւ Գանձակի գաւառապետին 1883 ի յունուար 15 ին: »

« Վրաստանի եւ Խմէրէթի թեմի Հայոց հոգեւորական ուսումնարանաց թեմական տեսուչ »

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ»

Պ. Տէր Յովհաննիսեանի եւ Պ. Ղ. Աղայեանցի նամակները արդէն բացայայտ կերպով կը հերքեն իշխան Գոնդուկով-Կորսակովի պաշտօնական յայտարարութիւնն եւ այս

վերջնային ճշմարտութիւնը կատարածելի կը կացուցանեն ամեն մարդու առաջ : Նոս նորինակ յայտարարութիւն մը ըրած է և Շուշիի թեմական տեսուչ Տէր Գրիգորեան :

Կաւկասիոյ կառավարութիւնն իւր յայտարարութեան մէջ ուսումնարաններն փակելու մի ուրիշ փաստ եւս յառաջ բերած է ըսելով. «Ըստ որում Էջմիածնայ Սինոդն ռուս կառավարութեան բերանն է, ուրեմն նա պարտաւոր էր կատարել բարձրագոյն հրամանն առանց Կաթողիկոսին» : Այս փաստ այնքան անմիտ է որ արժանի չէ ո եւ է նշանակութեան : Նոյն իսկ Պաթաթէնիայի մէջ կը տեսնենք թէ Սինոդը նշանաւոր խնդիրներու մէջ վճռական ձայն չունի, այլ ամեն խնդրոյ լուծումն Կաթողիկոսէն կախումն ունի. սակայն Կաւկասիոյ կառավարութիւնը փաստաբանական դարձուածներով ջանաց անարդէանել որ ուսումնարանական խնդրոյն մէջ Սինոդը կարող է և իրաւունք ունի զանազան փոփոխութիւններ կատարել առանց Գերագոյն Կաթողիկոսի : Թէ Դոնդուկով իշխանի կառավարութեան սոյն պատճառաբանական փաստերն ո՞ր աստիճանի ճշմարիտ են, կարելի է հասկանալ հետեւեալ նամակէն, որ Էջմիածնէն մարտ 4 թուով ուղղուած է Ռուսիէ Կաթողիկոսին խնդրութեան :

«Ռուսիէ Կաթողիկոսի Տէր Կաթողիկոսին մէջ զետեղուած էր հեռագիր մը որ կը յայտատարարէր թէ Հայոց Սինոդը արտաքին կարգի հրաւեր կարգացած է բոլոր թեմական առաջնորդներուն՝ ամենակարեւոր խնդիրներու համար խորհրդակցելու : Սոյն հրաւերի նպատակն է՝ որպէս զի թեմական առաջնորդներն Սինոդի անդամներուն հետ խորհուրդ ընեն որոշելու համար թէ արդեօք կա՞յ կէտ մը ոյր հիման վրայ Սինոդն իւր իշխանութեամբ իրաւունք ունենար Հայոց եկեղեցեաց մօտ գտնուած հոգեւոր ուսումնարանները կառավարութեան պահանջմանց համեմատ նախարարութեան անմիջական պատասխանատուութեան ենթարկել, առանց ամենայն Հայոց Գերագոյն պատրիարքի և Կաթողիկոսի իրաւասութեամբ սահմանաւորուելուն :

«Կըսուի թէ պետութեան պահանջման նպատակն ու ցանկութիւնն է դաստիարակութեան առաւել կանոնաւոր եղանակ

«մտցնել ուսումնարաններու մէջ : Բայց այս տեղ ըստ երեւութին փոքրիկ արգելք մը կը հանդիպի որ յիշեալ պահանջման գործադրումը կը դժուարացնէ. այս նպատակաւ «հա խորհուրդի կարեւորութիւնը զգացուած է :

«Ըստ որում Հայոց եկեղեցական ուսումնարաններն անմիջական կերպով Կաթողիկոսին իշխանութեան ենթարկուած են, ուստի նորա բացակայութեան միջոցին (որոյ ընտրութիւնն ուսումնարաններու փակումէն զրեթէ երկու ամիս յետոյ պիտի կատարուէր) հապիւ թէ կարելի է ո եւ է փոփոխութիւն ընել, թէեւ այդ փոփոխութիւնը զերբնտիր լինէին :

«Սինոդն արդէն իսկ իրաւունք չունի «վերափոխութեան հրահանգ առաջարկելու» : «Էջմիածնայ Կաթողիկոսի հրահանգ և ինքնապատշաճ ըլլան :

«Սինոդն պետութեան սոյն պահանջումն չընդունելու մի ուրիշ աւել իրաւացի և հաստատուն արգելք մ'էս ունի, այն է որ Հայոց եկեղեցական (հոգեւոր) զպրոցները մասնաւորապէս եկեղեցեաց հասոյթներով կը պահպանուին, զրեթէ բոլոր դասատուներն եկեղեցեաց պաշտօնեայնէն են, այս վարժարանները շատ քիչ բացառութեամբ եկեղեցեաց կալուածներու կամ նոյն իսկ շնոցա մէջ կը գտնուին և իրենց սկզբնաւորութեան դարերէն ի վեր եկեղեցեաց անբաժան մէկ մասը կը կազմեն : Այս ամենէն բացառութեամբ կը հասկցուի թէ ո՛չ միայն Սինոդն առանց Կաթողիկոսի անկարող է ո եւ է փոփոխութիւն մտցունել, Հայոց զպրոցներու մէջ, այլ մինչեւ անգամ Կաթողիկոսն աչպիսի համարձակ քայլ մը կրնայ ընել միայն մէկ պարագայի մէջ, այն է Հայաստանեայց եկեղեցեաց բոլոր պաշտօնեայնէն խորհուրդի հրաւիրելով Էջմիածնայ Մայր Աթոռը :

«Կըսուի թէ Սինոդը թեմական առաջնորդաց հետ խորհրդակցելով յիշեալ երկարակացութեան յանդած է :

«Կըսեն թէ, չը գիտեմ որչափ ճշմարիտ է, Սինոդն վերոյիշեալ մտքով պատասխանելով պետութեան պահանջման, Հայոց հոգեւոր ուսումնարանաց աշակերտներու բարձր կամովի յանձնեց պետութեան բարեւէր հսկողութեան :

«Տակաւին անյայտ է թէ ինչ վախճան
«պիտի ունենայ այս մեծագոյն կարեւորու-
«թիւն ունեցող խնդիրը» :

*
* *

Ռուս մամլոյն մէջ հրատարակուած այս
ամենփաստերէն բացայայտ կ'երեւի թէ Հա-
յոց ուսումնարաններու փակման գլխաւոր
պատճառները երբէք անոնք չեն զորս Դոն-
դուկով իշխանը ցոյց կուտար իւր հրատա-
րակած ընդարձակ յայտարարութեան մէջ,
այսինքն Կաւկասիոյ հայ վարժարանները
կը փակուին ոչ թէ որովհետեւ Հայոց ու-
սումնական իշխանութիւնը կատարած է
1874ի օրինաց այս կամ այն կարեւոր կէտե-
րը (որն բոլորովին սուտ է ինչպէս կ'ապա-
ցուցանեն Տէր Յովհաննիսեանի, Աղայեանի
եւ Տէր Գրիգորեանի նամակները), կամ
որովհետեւ էջմիածնայ Ս. Սինոդը հրաժա-
րած է 1884 փետրուար 16 ի օրէնքն ան-
ձամբ գործադրելու իրաւունքէն եւ խնդ-
րած է որ մինչեւ նորոնախի Կաթողիկոսի
գահ բարձրանալը սոյն օրինաց գործադրուին
յետաձգուի : Ոչ, Այս ամեն փաստեր պատ-
ճառաբանեալ են եւ գործին օրինական ձեւ
տալու կը ծառայեն միայն . այլ ուսումնա-
րանաց փակուելու գլխաւոր պատճառներն,
ինչպէս որ քանի մը շարաթիւեր առաջ Բա-
կէ Կարէեւի Թիֆլիսի թղթակիցը կը հաղոր-
դէր, Կաւկասիոյ պետական ուսումնարանաց
կրթական իշխանութեան Հայոց հոգեւոր
դպրոցներու նկատմամբ ունեցած թշնամու-
կան յարաբերութիւնքն են :

Մի կողմէ Դոնդուկով-Կորսակով իշխանի
անձնական ատելութիւնն դէպի քանի մը
հայազգի պաշտօնատարներ . միւս կողմէ Կա-
կասիոյ կրթական շրջանի հոգաբարձու Յա-
նովսկիի անհաշտ վարմունքն դէպի Հայոց
կրթական իշխանութիւնն, առիթ տուած են
իշխանին իւր եւ իւր գաղափարակցի անձ-
նական ատելութեան վրէժն ամբողջ հայ
ազգէն լռածել : Ահա այս է փակման միակ
եւ գլխաւոր պատճառն որ պետական օրի-
նաց դիմակին ներքեւ կը կատարուի : Եւ
այս գործ անկարելի չէ, ըստ որում ինքն
լինելով բարձրագոյն պաշտօնեայ, փափա-
քած ամբաստանութիւնները կ'ընէ կեդրո-
նական կառավարութեան առաջ, իսկ կեդ-
րոնական կառավարութիւնը բոլորովին ճշը-

մարիտ կը համարէ : Նոյն Ս. Կարէեւի
եւս խօսելով Կաւկաս լրագրի խմբագրական
յօդուածի մը մասին, նուիրուած Հայոց
դպրոցական խնդրոյն, կ'ըսէ. « Հայոց դպ-
« րոցների խնդրոյն այսպիսի հետեւանք ըս-
« տանալն ամենեւին 1984 փետրուար 16 ի
« օրինաց գոյութեան պատճառաւ չէր » :

*
* *

Ըստ երեւութին խնդիրն կը ցուցնէ թէ
Սինոդն ունի զօրաւոր փաստեր իւր դատն
պաշտպանելու, բայց ազոր համար անհրա-
ժեշտ են բանիբուն մարդիկ որոնք շատ թէ
քիչ անձնական աղղեցութիւն ունենան
կեդրոնական կառավարութեան առաջ փա-
տաբանելու Հայոց այս մեծագոյն դատը .
բայց դժբաղդաբար Ս. Սինոդը զուրկ է
տյապիսի անձերէ : Աղղեցութիւն ունեցող
միակ անձ մը կը մնայ, այն է ապագայ Կա-
թողիկոսն . եւ յիշաւ Կաթողիկոսէն զատ
ուրիշ ոչ ոք կարող է բարւոք ելք մը տալ
սոյն կնճռոտ խնդրոյն :

Թէ յիշաւ Հայոց դպրոցներու փակու-
մը Դոնդուկովի եւ Յանովսկի մեքենայու-
թեանց ծնունդ են եւ ոչ թէ պետական օ-
րինաց հետեւանք, այս բանի ապացուցման
կրնայ ծառայել սա զօրաւոր փաստ թէ
Հայոց ուսումնարանները միայն Կաւկասիոյ
մէջ կը փակուին . իսկ եւրոպական Ռուսիոյ,
որպէս է Պետերբուրգի, Մոսկուայի, Քեսա-
րաբիոյ եւ Աստրախանի թեմերու դպրոց-
ները նոյն ուղղութեամբ կը շարունակուին
եւ չպիտի փակուին :

*
* *

Մեզ յայտնի է որ Կաւկասիոյ կառավա-
րութեան կամ կեդրոնական իշխանութեան
Հայոց հետ այսպէս վարուելու միակ նպա-
տակն այն է որ այսպիսով կարողանայ ու-
սական քաղաքակրթութիւն, ուսական ոգի
մոյցնել ժողովրդի մէջ եւ ուսացուցման
գաղափարը զօրացնել . սակայն մեր առաջ
դրուած է մարդկային ազգի պատմութիւնն,
ուր քաջայայտ կը տեսնենք թէ բռնութիւն,
հալածանք աւելի եւս պատճառ եղած են
ազգայնութեան առանձնայատկութիւններն
պահպանելու . աւելորդ է այդ մասին անց-
եալէն փաստեր բերել, ըստ որում ամեն
մարդ լսած եւ կարգացած է : Այլ աւելի

լաւ է ներկայէն օրինակ առաջ բերել: Այսօր
ուսու կառավարութիւն փոխանակ իւր ուս-
սացուցման նպատակի մէջ մի քայլ յառաջ-
գլխելու, քանի մը քայլ կը յետադիմէ. ըստ
որում Կաւկասիոյ և ընդհանրապէս հայ ժո-
ղովուրդն եթէ առաջ կը յարգէր պետութիւ-
նը, կը սիրէր ուսու ազգութիւնը, կը փա-
փաքէր մօտենալ անոր, այսօր բոլորովին
հակառակն է:

Պետութեան հրամանաւ դադարեալ Պե-
տերբուրգի ուսու ազգական թերթ մը, Պա-
րիսի, 1881ին տակաւին խօսելով Պ. Եւ-
նովսկիի պաշտօնի մասին, յոյս կը յայտնէր
թէ բարեխղճութեամբ պիտի կատարէր իւր
պաշտօնն. ապա խօսելով հպատակ ազգու-
թեանց լեզուի դասատուութիւնն ջնջելու
վնասակար երեւոյթին վրայ, այսպէս կ'ըսէր.
«Եթէ պատմական, եթէ քաղաքական եւ
եթէ հանրային տեսակէտով ալ քննուի խըն-
դիրն, միշտ այն հետեւութիւնը կ'ստացուի.
թէ անկարելի է արհեստական կերպիւ օտար
ցեղի մը իւրացնել այն ձեւերն որք նորա
յատուկ եւ յարմար չեն կարող լինիլ, նորա
պատմական կրթութեան եւ գոյութեան
պայմանաց համեմատ չեն: Բազմաթիւ տարի-
ներու եւ մինչեւ անգամ մէկ դարու փորձերն
որպէս ի Ռուսիա նոյնպէս եւ այլ երկիրնե-
րու մէջ կրնան համոզել տալ թէ ո՛րքան
խախտու է դարերով գոյութիւն ունեցող
ազգայնութիւնները ոչնչացնելու եւ զայնս
տիրող տարրի հետ միացնելու գրութիւնն:
Հպատակ ցեղերու ձուլումն, նոցա մէջ օ-
տար լեզու, օտար կրօն, օտար գիտութիւն
մարմնացնելը կրնայ գլուխ հանուիլ բնա-
կան ճանապարհով, ո՛չ թէ ճնշողական մի-
ջոցներով, այլ միայն քաղաքակրթութեան
ազդեցութեան տակաւ առ տակաւ ծաւալ-
մամբ սոյն ցեղերու մէջ: Այս խնդիր յոյժ
երկայն եւ պատմական տեսութիւններով
ըստ բաւականին պարզաբանուած է: Ի մեզ,
խկական գիտութեան նմանօրինակ հետե-
ւութիւնը տակաւին կաաարեալ քաղաքա-
կանութիւն ստացած չեն եւ մօտ ժամա-
նակներս Կաւկասիոյ պետական դպրոցնե-
րու մէջ հայերէն եւ վրացերէն լեզուներու
դասատուութիւնն արգիլեցաւ. բոլոր գի-
տութիւնը ուսուցէն լեզուով կ'աւանդուին,
որ Կաւկասիոյ ժողովրդ ոչ համար փիլիսո-
փայական հետեւութեամբ մեծ դժուարու-

թիւններ կը ներկայացնէ. այս տեղ է ա-
հաւասիկ անխուսափելի երեւոյթն, տը-
գիտութեան յաճախակի կրկնութիւնն, ե-
րեւոյթ մ'որ սոյն իսկ ուսու գիւղացւոց մէջ
չարտադանց ընդհանրացած է եւ մեծ վնաս կը
պատճառէ, այնպէս որ Պետերբուրգի ներկայ
ուսուցչական ժողովի մէջ այդ չարիքն ար-
մատախիլ ընելու խնդիր պիտի ծագի:

«Տեղական լեզուներու դասատուութիւնը
ջնջելու գլխաւոր նպատակն էր որպէս զի
սոյն ցեղերու ազգային զրականութիւն-
ներն, ազգային տեսութիւններն չը դար-
դանան, այլ միայն ուսական զրականու-
թիւնը ծաւալի. թէեւ ճշմարտն խոս-
տովանելով նոցա ազգային լեզուներու
դասատուութիւնը վնասակար բան մը չի
նստատեսեր: Այժմեան հոգաբարձուն
(Եւնովսկի) կը հրաժարի նմանօրինակ դը-
րութեանն եւ ազգային գրագիտութեան
պարբերական ծաւալման օգտակարութիւ-
նը կը խոստովանի»:

Այսպէս ահա ուսու նշանաւորագոյն
թերթը մինչեւ անգամ պետական զըպ-
րօցներուն մէջէն հայերէն և ուսուցէն լե-
զուներու դասատուութեան ջնջումը հան-
րային զրագիտութեան ծաւալման մեծ խո-
չընդոտ մը կը ներկայացնէ. երբ այդպիսի
փաքրիկ վարմանց մէջ ուսու կառավարութեան
անքաղաքականութիւնը կընկատէր, ի՞նչ պի-
տի ըսէր նորա այժմեան բռնած ընթացքին
համար, եթէ շարունակած լինէր իւր գոյու-
թիւն:

Պ. Եւնովսկի որպէս բանիբուն, գիտնա-
կան, բարձր խելքի տէր անձ մը շատ լաւ կը
հասկնար մայրենի լեզուի դասատուութեան
կարեւորութիւնն. ուստի անսխալապէս փո-
խել կուտայ իւր նախորդի՝ սխալ ու վնա-
սակար կարգադրութիւնն և հայերէն ու
վրացերէն լեզուներու դասատուութիւնը
նորէն կը մտցնէ պետական ուսումնարանաց
մէջ և ջերմ ցանկութիւն կը յայտնէ որ
պետական լեզուի զրականութեան հետ
զարգանայ և մայրենի լեզուի՝ զրականու-
թիւնն, ըստ որում այս կերպով միայն հպա-
տակ տարրը կարող է մօտենալ տիրող տար-
րին, որ ուսու կառավարութեան և նորա
քաղաքապետաց միակ ցնորքն է:

Սակայն Ռուսիոյ մէջ կարծես թէ իւրա-
քանչիւր ազատական անգամ երբ աւելի բար-

ձեր աստիճաններու կը հասնի, կը լինի բռնա-
կալ խաւարամ, և յետագիւնական և փոխա-
նակ կառավարութեան և ժողովրդեան շա-
հերը համերաշխելու, փոխանակ նորանոր
բարենորոգումներ մտցնելու, ընդ հակառա-
կըն նոցա մէջ փոխադարձ ատելութեան սեր-
մեր կը ցանէ և շինելու փոխարէն կը բանդէ
չնուաճն ալ: Այսպէս Տալստոյ Կոսա եր-
բեմն հռչակաւոր ազատական մ'էր և ինչ-
պէս ուսն նոյնպէս այլացեղ հպատակ ազ-
գերը մեծ յոյսեր կ'ապագէին անկէ. բայց
իւր պաշտօնի գլուխն անցնելուն պէս եւս
բռնակալ, խաւարամիտ և յետագիւնական
եւ իւր անունը սեռ ատելով գրոշմել
տուաւ թէ՛ ուսն եւ թէ՛ ոչ-ուսն ժողովրդ-
դոց սրտերու և մամուլի պատմութեան մէջ.
այսպէս եւ Դոնդուկով-Կորոսակով իշխանն
որ Պուլլարիոյ համար հաստատուած ազատա-
կան օրինաց գլխաւոր գործակիցն եղաւ.
այսպէս եւ Եանովսկի որ ինքն պետական
դպրոցներու մէջ վերահաստատեց հայերէն
և վրացերէն լեզուներու դաստատութիւնն.
իսկ այսօր ընդհակառակն նոյն Եանովսկին
է որ կ'ուզէ ոչ թէ պետական այլ մինչեւ
անգամ ազգային դպրոցներէն մ'յրենի լե-
զուի դաստատութիւնը վերցնել: Մինչ
աշխարհիս վրայ մարդիկ օր աւուր դէպի
ազատամտութիւն եւ ազնուութիւն կը
ձգտին, ի Ռուսիա ընդ հակառակ պաշտո-
նական անձինք դէպի բռնակալութիւն եւ
վատութիւն կը դիմեն եւ այս կարծես թէ
ուսն կառավարութեան ճակատագիրն է:

Պ. Տ.

ԳՐԱԿԱՆ

ԻՆՔՆԱՔՈՅՍ ԾԱՂԻԿՆԵՐ

Կենդանի արձան
Մանուկ Թէրլէմէզեանի յիշատակին

Ա.

Քանդի անգութ վիճակը
Աւերեց մեր բուրաստան,
Էլ հոտաւետ, գոյնզգոյն
«Ծաղկունք» չունի Հայաստան:
ՐԱՅՅԻ

Մեր քաղաքում չարթուս մէջ պատահած
մի անակնկալ պատահար դուրս վանեց զիս
իմ ընտրած նիւթի սահմաններից. պիտի
գրեմ ոչ կրթութեան, այլ բանաստեղծու-
թեան վրայ: Այո՛, այս չարթուս չարաբաս-
տիկ էր Վանի համար, զի չիջաւ նրա լու-
սաւոր աստղերից մէկը, կորաւ նրա ազդե-
ցիկ գերդաստաններից մինի ներկայացու-
ցիչը:

Ով որ փոքր ի շատե՛ դիտած է թէ որ-
քան ծանրակշիռ են դաւառական քաղաք-
ներում մերայնոց ազգային գործերի եւ
տեղական Վարչութեան հետ ունեցած յա-
րաբերութիւնների համար՝ խելօք, անկիրք,
վեհանձն ու հարուստ անձնաւորութիւն-
ներ, չէ կարող չողբալ Թէրլէմէզեանց պար-
կեշտ գերդաստանի հետ ապերջանիկ Մ-
նուկ Աղայի կանխահաս հրաժեշտը: Եւ ես,
որպէս մինը այդ հազուագիւտ ազնուական
ընտանիքի վշտակիցներից, կամեցայ հիւսել
այս փոքրիկ արձանը նոյն իսկ լուսահոգի
կրտսեր եղբոր, քանքարաւոր Մէնայէի
գողտրիկ ոտանաւորից:

Պէտք է մի թեթեւ պտոյտ կատարել
հայրական դիւղերի միջով, թափանցել փոքր
ինչ դաւառական քաղաքացիների ստորին
խաւերը՝ համակնալու համար թէ ո՛րչափ
հանճարներ ու տաղանդաւոր տնկատակա-
նութիւններ կորչում, անհետանում են
ընդհանուր տղմուտ հոտանքի մէջ: Մեր ըն-
կերական եւ բարոյական այդ անկատար
կացութեան Վան քաղաքն էլ, շատ ուրիշ-
ների հետ, տալիս է ամէն օր իր հարկը
այն հարիւրաւոր զոհերով, որ վխտում են
այստեղ գրեթէ ամէն թաղի ու անկարգ
կրթարանի մէջ:

Ահա մի տառնամեայ կրթարանական
տղայ, որ չը յաղթուելով իր անձեռնհաս
կրթիչների յուսի ուղղութիւններից, սքան-
չացում ու զարմանք է պատճառում հան-
դիսատեսին, նոյն իսկ իր խանդարեած, բայց
թարմ հանճարով կամ այս ինչ ու այն ինչ
գեղարուեստական ձիրքով: Սակայն այդ
հիացումը կարճատեւ է, զի անխոհեմ հօր
ձեռքերը հանում, յափշտակում են կրթա-
րանի ծոցից մի չարաբաստիկ առաւօտ այն
չնաշխարհիկ հանճարը, որ անմխիթար կըր-
թիչների միակ նեցուկն ու սփոփանքն էր
կազմում: Եւ ահա՛ փոքրիկ հանճարը՝ բըռ-

նի կերպով զետեղուած այն անկերպարան Բաբելոնի մէջ, որ վաճառականի լեզուով շրջէ է անուանում: Չարչի գնալ եւ կըրթութիւնը չարունակել՝ մեր մէջ երկու հասակութիւններ լինելով, փոքրիկ հանճարն էլ, պարտաւորուած, մնաս բարեա՛ւ է աւուր աշխատեալ իր մտքի ու սրտի աւաղբիւնութեան: Այդպէս է վերջանում ահա մեր «կենդանի մեղեանքներ» յուշարկաւորութեան հանդէսը համեստ կրթարանի սեամից դէպի գոռոզն շրջէ: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի . . .

Այս այսպէս լինելուց յետոյ այլեւս ի՛նչ զարմանք որ մեզ նման փոքրիկ ու խեղճ ազգութիւններ չեն կարողացել երբէք ընծայել աշխարհին Շէքսպիրներ, Բայրոններ, Վօլտէրներ, Գամբետներ, Դարվիններ: Մեծ մարդիկ մեծ ազգերի պտուղն են եղած:

Սակայն ի՛նչ է ուսուցանում մեզ մարդկային ազգի, մանաւանդ նրա քաղաքակրթութեան պատմութիւնը: Ազգերի երկայն շաբեր — ոմանք գիտակցապէս, այլք անգիտակցաբար — դիմում են անընդհատ դէպի մի հեռու եւ ազօտ կէտ նպատակի: Ճանապարհը, որով նրանք ընթանում են, անողորմ, փշոտ ու վհատեցուցիչ է: Ուստի նրանց մի մասը ճանապարհին մեռնում, միւսները խորխորում ու հիւանդանում են, բայց մնացածը անպատճառ իրենց ցանկալի նաւահանգիստը հասնում: Այդ նաւահանգիստը, այդ Աւետեաց երկիրը՝ մարդկային ազգի հոգեկան ապաստանն է:

Այն, ինչ որ պատահում է ազգերին, յատուկ է նաեւ առանձին անհատներին: Զօրեղ հոգին կարող է ճնշուել, պահ մի իր ազատ թռոյցքը խանգարել, բայց բաւական է մի բույս ընդդիմադիր ոյժը խորտակած տեսնել՝ Ներսէս Երեմեան լոյս աշխարհ ժայթքելու համար, աւելի զօրաւոր, աւելի փառահեղ:

Այդ զօրեղ հոգիները ինչպէս շատ գաւառացիք, ունեցել են նաեւ փոքրիկ Վանի բնակիչք: Այդ զօրեղ հոգիներն են եղել որ ազատել են այս քաղաքը բաղդի շատ եւ շատ հարուածներից: Այդ հոգիներն են եղել որ սփոփանք ու փառք են կազմել իրենց հայրենակիցներին՝ մերթ իրենց հարստութեամբ, մերթ իմաստու

թեամբ, մերթ գրչով եւ մերթ տաղանդով: Այդ յարգելի անձինք են եղել, որ իրենց ամբողջ նիւթական ու բարոյական ստացուածքը գոյացուցել են իրենց ճակտի դառն քրտինքով, իրենց անյուշ գործունէութեամբ եւ անյադ, կարօտակէզ ինքնակրթութեամբ: Դրանք են ահա՛, զորս ինձ յոյժ սիրելի եղաւ Խոնաֆայի Ժողովուրդը: Այդ զորանց զլացուել է միշտ միակ կենսատու ջուրն ու տաքութիւնը՝ իրենց չըջապատող էակներից:

Այդ Խոնաֆայի Ժողովուրդը, ինչպէս ասացի, Վանը շատ է արտադրել:

Դուք կը տեսնէք մի երիտասարդ վանցի կտաւագործ, որ իր ինքնակրթութեան շնորհիւ Կ. Պոլսի Պատրիարքական դահլը բարձրանալուց յետոյ, այսօր համայն ազգի կողմից կաթողիկոսական մեծ Աթոռն է հրաւիրուում: Այդ նախկին կտաւագործը՝ այսօր Խոնաֆայի Ժողովուրդն է:

Դուք կը տեսնէք մի պարզ Կոնստանդնուպոլսի, որ իր քրտնաջան տքնութիւններից յետոյ այսօր Վասպուրականի առաջնակարգ պերճախօս բեմասաց է համարուում: Այդ պարզ քահանայորդին՝ այսօր Երեմեայի Արքեպիսկոպոսն է կոչուում:

Դուք կը տեսնէք մի խանութպանի աշակերտ, որ իր ծնողների ճիրաններից կտուց անապատը եւ այնտեղից Կ. Պոլսի փախչելով այսօր համայն ազգի կողմից վարչական ու մատենագրական հանճար է ճանաչուում: Այդ նախկին խանութպանի աշակերտը՝ այսօր Գաբրիէլ Գաբր. Սրբաւոյնեանն է կոչուում:

Դուք կը տեսնէք մի աղքատ պատանի, որ պանդխտութեան ցուպը ձեռքին՝ հեռու հիւսիսն է ապաստանում, այսօր համայն ազգից իբրեւ նրա մեծ բարերարն է յարգուում: Այդ աղքատ պատանին՝ այսօր Միլլիթ Արա Սահասարեանն է կոչուում:

Դուք կը տեսնէք մի աղքատ մոմ, որ իր կրթութեան անյադ ծառաւը յաղեցնելու համար այլեւս կղզի չը թողնէ Վանայ ծովի մէջ առանց այցելութեան՝ լուսոյ մի ճառագայթ աւելի տանալու համար, այսօր ազգի մէջ իբրեւ քանքարաւոր բանաստեղծ եւ հնագետ է ճանաչուում: Այդ անտէր մոմը՝ այսօր Ղեւոնդ Գաբր. Փերգալեանն է կոչուում (*):

(*) Ղեւոնդ հայր սուրբը բազմաթիւ չափաբերական անտիպ գրութիւնների հետ ունի նաեւ «Նշխարհք

Դուք կը տեսնէք անդրջրհեղեղեան մեթոտով կրթութեամբ մի ուսանող, որ ազգի ընթերցող մասից «Շահէնն ի Սիբիր» հոգա-կաւոր գրքի հեղինակ է ճանաչուում: Այդ անդրջրհեղեղեան մեթոտով կրթութեամբ ուսանողը՝ այսօր Սեդրակ Տէր Սարգսեան է կոչ-ւում:

Դուք կը տեսնէք մի կայր պատանի եւ մի արհամարհած Կարթէն, որ այսօր իրենց հայրենիքի երկու վիթխարի կրթական գործիչներն են համարուում: Այդ կոյրը՝ այսօր Համբարձում Երեմեան, դարբինը՝ Յովնանէն Բարսաղեան է կոչուում:

Դուք կը տեսնէք վերջապէս տաղանդաւոր բանաստեղծներ՝ Մէլայէլ Թէրլէֆեան եւ Տէքեան Արթուրեան, նկարիչներ՝ Գալուստ Աւանեսեան եւ եղբարք Պալէան, պատկերա-հաններ՝ Եղբարք Յասիկ եւ Վրէնէն Փափաղեան, վորագրիչներ՝ Գալուստ Թորոսեան, Յովն. Նաւեան, երաժիշտներ՝ Յովնանէն Բարսաղեան, Սաֆար Փահրեան, Գեորգ Շէրենց (ձայնական) եւ Մարտիրոս Խորենեան (գործի-ական) եւ այլք: Իսկ գրագէտներ, լեզ-ուագէտներ, գիտութեանց ինչ ինչ ճիւղերով պարագլուղներ, վարչական հասու-թիւն ունեցողներ եւ կրթիչներ, ցանկը անշուշտ աւելի երկայն է:

Սրանք բոլորը, ինչպէս ասացի, վառի հատնտիր, բաղդաւոր աստղերի տակ ծնած՝ զօրեղ հոգիները, նրա քննաքնն ծաղիկներն են: Բայց որչա՞ր անշուշտ ու ջնջին տոկոս են այդ մի ափ մարդիկ այն բնութեւոր հան-ձարների կողքին, զորս «կենդանի մեռեալ» անունով անշուշտ անպակաս խաւերի մէջ են թաղուած եւ համարուում:

Խոստանալով ուրիշ անդամներ ներկա-յացնել իմ ընթերցողներին մեր այդ քննա-քնն ծաղիկներէ հոյակապ արդիւնքները, յա-ջորդ յօդուածովս պիտի դադարիմ, ինչպէս ասացի, Պ. Միքայէլ Թէրլէմէզեանի գործերով:

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՅ

Հայրց պատմութեան» տիտղոսով մի բաղմահատոր Հաւաքածոյ, հին պատմական եւ կրօնական մատենա-դերների յիշատակարաններից քաղուած: Իր ինքնա-կրթութիւնը այդ ճերմակին այսպէս է ձեւացնում:

Ձի մանկութեանս վառ բարգաւաճ վարժարան Ձը գտով, անցան մատաղ օրերս իմ խոպան. ինչոր ունիմ այժմիկ ողջն է մեռացկան, Սմա, նմա հարցեալ ուսայ զամենայն:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԿԻՅԵՕՄ ՏԷ ՀՈՒՄՊՈԼՏ

ԵՒ

ՇԱՐԼՈՓ ՏԻԷՏ (*)

Ա.

Գերմանիոյ մէջ չկայ մէկը որ Կիյեօմ տը տը Հումպօլտի Նախնի աւ Բարեկամութի մի կոչուած գործը չճանչնայ, որ իւր մահուա-նէն տասն երկու տարի ետքը 1848ին հրա-տարակուեցաւ: Այս մեծանուն մարդուն համար վերջերս Պէրլինի համալսարանին դի-մացը յիշատակարան մը կանգնեցին: Սոյն նամակները մեծ համբաւ ստացան. այն ժամանակէն ի վեր անդադար կը վերատըպ-ուին եւ ամեն գրատուններու մէջ կը գտ-նուին: Եթէ Կիյեօմ տը Հումպօլտ ռարեկա-մուհի մը չունենար, իւր վառքը կատար-եալ չպիտի ըլլար. ընթերցողի չպիտի ու-նենար:

Ամէն մարդ գիտէր որ Հումպօլտ տէրու-թեան պաշտօնեայ մ'էր, որ շատ անգամ օտար տէրութեանց ըով Բրուսիոյ ներկա-յացուցիչն եղած էր եւ որ առանց երբէք առաջին դեր մը խաղալու, Վիէննայի վե-հաթոլովին մէջ իւր մտային կորովը, քննա-դատութեան տաղանդը, իւր խիստ՝ բայց քիչ մը հեզնող քաղաքավարութիւնը ցոյց տուաւ: Գիտէն նաեւ որ այս քաղաքագէ-տը իւր կենաց մնացեալ օրերը գիտութեան տուաւ եւ թէ իւր դժուարիմաց եւ ստէպ կնճաւորի դրուածները զարգաւարներու շե-մարաններ են, ուսկից ամէն երկրի գիտուն-ներ մրցելով քաղած են եւ տակաւին պիտի քաղեն երկար ատեն:

Իսկ գալով իւր մասնաւոր կենաց, երի-տասարդ ութեանէն ի վեր ամէն ինչ կը ման-րախուղէր եւ կանայք տիեզերքին այն մա-սը չէին կազմեր որուն համար անտարբեր ըլլար: Երեւելին Ռաշէլ ըսած է անոր հա-մար. «Իւր մտքին ազատութեան վրայ առա-ւել պիտի հիմնայի եթէ իւր սկզբանց մէջ աւելի քիչ գործածէր այդ ազատութիւնը»:

(*) Այս աշխատութիւնը Չմիւռնիացի մի դը-բագէտ Օրիորդի կողմանէ խմբագրութեանս առաք-եալ թարգմանութիւն մ'է, զոր կը փութանք հրա-տարակել:

Ե. Խ.

Վարնհակն զայն կատարեալ կռապալտ մը նշանակած է : Բայց կռապալտները երբեմն ընտիր ամուսիններ կ'ըլլան : 1791ին Օրիորդ Քարօլին տը Տայէրէօտն չքնաղ եւ սիրուն անձին հետ ամուսնացաւ , որուն Հումպօլտ յունարէն սովրեցնելով միասին Հերոտոտոս եւ Հոմերոս կը կարգային : Մինչեւ վերջ մեծ սիրով ասրեցան եւ այդ ամուլը ամուսնական մտերմութեան , միարանութեան եւ միակամութեան օրինակ կը հռչակուէր . բայց զիրար այսչափ սիրելով հանդերձ , շատ բաներ մէկ մէկու չէին հաղորդէր : «Մեծ ցաւեր եւ ուրախութիւններ կրնամ ունենալ առանց անոնք իմ սիրելիներուս հաղորդելու պէտք մը զգալու . այսպէս եմ կնկանս ու զաւակացս հետ : Եւ այս մասին կինս այնքան ինձ համամիտ է , որ եթէ ըստ պատահման դէպք մ'իմանալու ըլլայ որ իրեն հաղորդած չեմ , երբէք չզարմանար : Վստահութիւնը սիրոյ եւ բարեկամութեան պէտքն է , բայց մեծ հոգիները գաղտնի մտերմութեանց շատ յօժարութիւն չունին» :

Երբ այն հռչակաւոր Նոմալանէն հրատարակուեցաւ , Հումպօլտի բարեկամները որք կը կարծէին անոր բնաւորութիւնը եւ միտքը լաւ ճանչնալ , խիստ զարմացան երբ իմացան որ բարեկամուհի մ'ունէր նա որուն հետ քսան տարիէն աւելի կը թղթակցէր : Ասիկա Շարլօթ Տիէտ կը կոչուէր եւ Հումպօլտ բազմիցս յայտնած էր անոր . որ իւր անուան համար մասնաւոր ճաշակ մ'ունէր , թէ շատ կ'ախորժէր զայն արտասանել կամ գրել : Այն բարեկամուհին տխուր անձ մ'էր . Հումպօլտ զայն կը մխիթարէր եւ կը սովրեցնէր թէ ի'նչպէս ընելու էր իւր ցաւերը ամոքելու եւ կենաց ծանր բեռը թեթեւցնելու համար : Հարիւր յիսուն նամակները որ ի լոյս ընծայուեցան , բոլորն ալ երջանկութեան վրայ խնայասիրութիւններ են , եւ անոնց մէջ բաւ մը չկայ որ փիլիսոփայի մը յիշատակը կարենայ աղարտել : Ասոնք աւելի կրթական եւ հոգեւոր գրուածներ են , եւ տիկին Հումպօլտ առանց զայրանալու կամ գայթակղելու ամէնը կրնայ կարդալ :

Մանաւանդ թէ այս թղթակցութեան քսան տարիներուն մէջ , երկու անգամ միայն տեսնուեցան , անգամ մը Ֆրանքֆորդ 1817ին , անգամ մ'ալ Քասէլ 1828ին : Այն

ժամանակ Շարլօթ յիսուն եւ ինը տարեկան էր եւ Հումպօլտ վաթսուն եւ մէկ : Հումպօլտ այս կերպով իւր այցելութիւնը կը ծանուցանէ . «Նրջանիկ եմ , սիրելի Շարլօթ , քեզ ըսելու որ մեր ուղեւորութեան յատակագիծը փոխելով Քասէլէն պիտի անցնինք : Շատ ուրախ եմ որ դքեզ պիտի տեսնեմ , թեւ մէկ կամ երկու անգամ իսկ ըլլայ : Եթէ բաւական կանուխ հասնիմ , նոյն իրիկուն կուգամ քեզ տեսնելու , իսկ եթէ ուշ երկրորդ օրը . եթէ հետեւեալ օրն ալ մնամ , երկու այցելութիւն կուտամ» : Մէկ անգամ միայն գնաց : «Եթէ աւելի մօտ ըլլայիր , կէս ժամ եւս կրնայի քեզի հետ անցնել . բայց անկարելի էր : Յոյժ բերկրեցայ զքեզ տանդ մէջ տեսնելուս , որուն համար քաղցր տպաւորութիւն մ'ունեցայ» : Այս զգացումները կրնայ մարդ բոլոր տիեզերքի խոստովանիլ , եւ սակայն Հումպօլտ կորսուած կը համարէր , եթէ իւր ազգականները , բարեկամները , քարտուղարը իւր խիստ անմեղ եւ խիստ փիլիսոփայական հաղորդակցութեան վրայ ծանօթութիւն ունենային : Աւելի զանոնք չիթեւոր համար , միանգամ դպրոցի ուսուցչի մը Շարլօթին հասցէներէն շատ մը գրել տուաւ , զորս ամէն ճանբորդութեան հետք կը տանէր նամակատան անխորհրդապահութիւններէն զերծ ըլլալու համար , քանզի մարդիկ կան որ գաղտնեաց համար զայրոյթ մ'ունին :

Բայց եթէ Հումպօլտ Շարլօթի համար հանդարտ բարեկամութիւն կը տածէր , երբեմն ունեցած էր երիտասարդական աշխոյժ զգացում մը , որ թէեւ երեք օր միայն տեսեց՝ այլ խիստ ծայրայեղ էր : 1788 ին երբ Կէօթթինիկէ կ'ուսանէր , Բիրմոն գնաց , ուր քրայաջուրերու պատճառաւ շատ բազմութիւն կ'երթայ : Հոն պանդուկը սեղանին վրայ գեղանի աղջիկ մը տեսաւ , որուն քաղցր դէմքը խարտեալ մազերով առատապէս շրջանակուած էր , եւ որուն կապոյտ աչքերը մինչեւ ծերութիւն մարդիկ յանկուցանելու եւ զանոնք հիացնելու յատկութիւնը ունէին : Ասիկա Լիւտէն-Հաուզնի ժողովրդապետին դուստրն էր : Ահա այս գեղեցիկ անձը Շարլօթն էր որուն հետ Հումպօլտ երեք երջանիկ օրեր անցուց : Աւտըւնէ մինչեւ իրիկուն չէին բաժնուեր , ժուռ կուգային , կը խօսակցէին . Բիրմոն անմեղ

զբօսանաց վայր մը դարձած էր : Կէօթ-
թինկէի ուսանողը այս սիրուն անձէն բաժ-
նուած ժամանակ անոր տետրոց մը տուաւ
ուր այս բառերը գրած էր . « Ճշմարտին ,
բարիին ու գեղեցկին սէրը սիրաւ կ'ազնե-
ւացնէ ու կը բարձրացնէ . բայց այս ամէ-
նը քիչ կ'արժէ եթէ համակրելի անձ մը մեր
զգացման հաղորդակից չըլլայ : Այս համո-
զումը երբէք այնքան ազդու չէր իմ վրայ ,
որքան այս ժամուն որ քեզմէ կը բաժնուիմ
զքեզ-տեսներու անստոյգ յոյսով » : Սակայն
խոստացաւ որ քիչ ատենէն Լիւտէն-Հաուզնի
փոքրիկ դուռը պիտի զարնէր : Այս ուսա-
նողը պարոն մ'էր եւ խօսքը չբռնեց : Թէ՛
Կ'յեօմ կոչուին , թէ՛ Աղէքսանդր , Հումպօլտ-
ները խոհական մարդիկ էին , խենթութիւն
մ'ընելու անկարող , միշտ իրենց կիրքը յաղ-
թող եւ իրենց կենաց ամէն խոշնգոտները
հեռացնելու խիստ ուշադիր :

Սակայն իւր բազդին ամէն փոփոխու-
թեանց մէջ , չնուցաւ երբէք այն խարտեալ
մազերը եւ կապուտակ աչքերը որք քանի
մը ժամ իւր իմաստութիւնը վտանգի մէջ
դրած էին , կը յիշէր այն ծառուղին ուր ե-
րիտասարդ պարոն մը ժողովրդագետի աղ-
ջըկան մը հետ շրջագայած էր , նստարան
մ'ուր բազմած էին , եւ երբ քսան եւ վեց
տարի ետքը Վիէննայի վեհաժողովոյ խոր-
հրդակցութեան իսկ միջոցին , նամակ մ'ըն-
դունեցաւ որուն մէջ խիստ թշուառ կին
մ'իւր տառապանքները նկարագրելով իրմէ
խրատ կը խնդրէր , իւր անցելոյն յիշատակն
իսկոյն բուն յուզում մը պատճառեց այս
քաղաքագէտին՝ որ կը պարծենար դիւրաւ
չյուզուելուն : — « Ձեմ գիտեր , կը գրէր Շար-
լօթի , եթէ երբէք զիրար պիտի տեսնենք ,
բայց վստահ եղիր որ քեզմէ բան մը մնա-
ցած է հոգւոյս մէջ : Ինձ համար դու ան-
ցելոյն մի երեւոյթն ես որ երբէք մտքես
չպիտի ելնէ : Տարօրինակ յարաբերութիւն .
երկու արարածներ որ շատ տարիներ առաջ
երեք օր տեսնուեցան եւ որ վերստին տես-
նուելու յոյս չունին : Բայց այն անթիւ եւ
անբիծ ուրախութիւնը որ կ'զգամ այս վայր-
կենիս , այն հաղուադիւտ տեսակներէն մին
է՛ որ կ'աշխարհէ քեզ չխոստովանելու թէ քու
կերպարանքդ միշտ իմ երիտասարդական
զգացմանցս հետ խառն է , այն ժամանակին
յիշատակով՝ որ անցած է հիմա եւ երբ

Գերմանիա այսօրուանէ աւելի գեղաշէն էր » :

Այս ոչ շատ վիպական մարդն երբեմն
իւր վէպն ունեցած էր . արդ , վախճալով
զայն ապականել , հոգ չտարաւ իւր տարա-
բազդ բարեկամուհին երթալ տեսնել : Շար-
լօթ իրմէ խնդրած էր որոշելու թէ Պրոֆէսոր
վիկ բնակի թէ Կէօթթինկէ , այսպէս պա-
տասխանեց . « Երբ Պրոֆէսորի էի քեզ չէի
ճանչնար . Կէօթթինկէ ստէպ կը մտածէի
քու վրայ : Կէօթթինկէ դնա » : Շարլօթ զայն
իւր խոստովանաւայրը , իւր առաջնորդն
ընտրած էր : Հումպօլտ մեծ օրհնութիւն կը
համարէր որ մարդ մը իւր պահպանութեան
տակ կնկան մը սիրտն ունենայ , որ առանց
զգուշութեան եւ անկեղծօրէն բոլորովին
իրեն վստահի : Չմոռնանք որ չափազանց
հետաքրքիր էր եւ ինք ալ ըսած է որ իւր
ժամանակին մարդերը եւ կիները ըննելու
մեծ յօժարութիւն ունէր . « Ձանոնք կը սահ-
մանեմ , կը դասակարգեմ , ընդհանուր կար-
ծիքներու կը յարիմ եւ մասնաւոր գիտու-
թիւն մը կը յօրինեմ » : Շարլօթ սահմանե-
լու եւ դասակարգելու համար կարեւոր անձ
մ'էր : Հումպօլտ արդարեւ բարի դործ մը
կ'ընէր բարեկամուհին խրատելով եւ մխի-
թարելով , բայց ինքն ալ իր բաժինը կ'առ-
նէր , եւ ներքի է ըսել , առանց զինքը պա-
խարակելու որ այս տեսակ բարեբարու-
թիւնը իւր նախամեծար համարածն էր :

Շարլօթ տակաւին քսան տարեկան չէր
երբ ձախող ու չփութալի դէպք մը պատահե-
ցաւ իրեն : Գիւլլին մէջ ճանճրանալով , ու-
ղեց անպատճառ անկէց ելնել : Իւր ընտան-
եաց ընդդիմութեան հակառակ որոշեց սօք-
թէօր Տիէտի հետ ամուսնանալ որ Գասէի
բարձրագոյժ դատարանի փոխանորդ էր :
Ասիկա հարուստ էր , բայց տմարդի եւ
վայրենաբարոյ , եւ թէեւ շատ կը սիրէր
կինը , բայց իր սիրածը յարդեւ չէր գիտեր
Իսկոյն Շարլօթ հասկցաւ որ այս մարդն
աւելի կը խորէր քան թէ կ'ախորժէր : Բա-
րեկամուհի մ'ունէր որ թեթեւաբարոյ կին
մ'էր եւ իւր վրայ մեծ ազդեցութիւն կը
բանեցնէր . տսիկա իւր օրինալով կը ցու-
ցունէր թէ ամուսնութեան օրէնքին մէջ ի-
րաւախոհութեան եղանակներ կան : Ասկէ
զատ այնպիսի ժամանակի մէջ կ'ապրէր ուր
շատ մարդիկ կրից ան՝ ախազբելի իրաւունք-
ները կը քարոզէին եւ սրտի աղատագրու-

թիւն, համարձակ սէր ու զուարթ կեանք անմիտ վարքի դէմ կը հռչակէին: Վէժմարի մէջ կային կսնայք, որոնց վրայ շատ կը խօսուէր. այս կնիկները պաշտօնաւոր էին եւ անոնց հաճելի ըլլալու համար, բանաստեղծները եւ փիլիսոփայները կը սովորեցընէին որ տեսակ մը պարտականութիւնները ռամկական նախապաշարունակներ էին: «Ամուսնութիւնը այլ եւս կարեւոր բան չէն համարիր ճիշդէն ժամ Բօլ: Քասէլի մէջ գործերը աւելի աղէկ չէին: Շարլօթ Տիէտ հասարակաց ընթացքին հետեւեցաւ եւ վերջապէս համոզւեցաւ որ կին մը կրնայ իւր չսիրած մարդուն հետ ամուսնանալ եւ ներելի մխիթարութիւններ փնտռել:

Տիէտ անխոհեմութեամբ իւր կնոջը մըտքին ու գեղեցկութեան եւ ընդունած պատիւներուն վրայ կը հպարտանար. իւր տունը Վօն Հանսթայն անուն պաշտօնակալ մը յաճախէր, որ հեծեւազօր գունդի հրամանատար էր. ասիկա հասարակ մտքի տէր մարդ մ'էր, բայց աղէկ ընտանիքէ էր. հերքիւլեան կազմած ու սիրուն ձեւեր ունէր, եւ քիչ ատենէն սկսաւ գեղանի տիկին Տիէտի հրապուրիչն ըլլալ պարծիլ: Տիէտ այս բանս կասկածելով մեծ աղմուկ հանեց ու չարաչար վարուեցաւ կնոջն հետ, որ ամուսնոյն բնակարանը թողլով սիրահարին տունը ապաստանեցաւ:

Տօթթէօր Տիէտ դիւրութեամբ պսակալուծութիւն ընդունեցաւ: Շարլօթ քիչ ատենէն ցաւեցաւ ըրածին, բայց յուսացիւր պաշտած պաշտօնակալին հետ ամուսնանալով համբաւը վերանորոգել: Հանսթայն տասն չորս տարի խօստուճներով եւ սնոտի յոյսերով խաբեց, մինչեւ որ ուրիշ կընկան մը հետ ամուսնացաւ: Շարլօթ իւր յանցանքը չարաչար քաւեց ու կենացը մնացեալ օրերը յշտերով ու ցանկութեամբ անցուց: Տխուր, հիւանդ եւ չքաւոր էր. Իւր դիւթական մատները ընտիր ծաղիկներ յօրինելով՝ օրապահի'յը կը ձարէին: Անընդհատ աշխատութիւն — կէս դիշերէն ետքը կը ընանար եւ ատուռն կանուխ կ'ենէր: Իւր արիութիւնը ամէն բան դիժաւորաւեց:

Թէեւ իւր առողջութիւնն ու գեղեցկութիւնը խանգարեցան, տակաւին իրեն մօտեցողները կը սիրահարուէին: Իրեն ցոյց տրուած համակրանաց վրայ չէր բարկանար,

այլ կը զարմանար եւ մեղմիկ կը բողբէր՝ եթէ ուղէր, ուրիշ պաշտօնակալի մը հետ պիտի ամուսնանար, որ կասկածոտ եւ նախանձոտ մարդ մ'էր: Շարլօթ այս անձը շատ սիրել կարծեց. բայց երբեմն կ'ուզէր, երբեմն չէր ու երբ մերթ կը յառաջանար, մերթ կը քաշուէր: «Ամեն մարդ կը սիրես եւ մէկը չես սիրեր» ըսաւ զայրագին պաշտօնակալը եւ հեռացաւ: Երջանիկ ըլլալու համար չէր ծնած Շարլօթ, պարկեշտ կընկան մը համար խիստ պէտքէն՝ պէտքէն կնկան մը համար խիստ պարկեշտ ըլլալով: Մարդ մը՝ ինչ որ ըլլայ, կատարեալ պէտքէ ըլլայ. աշխարհի մէջ յաջողելու լաւագոյն ճանքան այս է:

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

ԽՈՒԼ-ՀԱՄՐՈՐՈՒ ՀԱՄՐՈՐ

ՆԻՒ-ԵՈՐՔ. Մարտ 29

Երէկ բարեկամի մը տունը տեսնուեցայ Եպիսկոպոսական երէցի մը հետ, որ խուլ համբերու համար մասնաւոր կրօնական պաշտօն կը կատարէ իւր եկեղեցոյ մէջ, եւ իւր ժամանակին մէկ մեծ մասը նուիրած է մխիթարելու բնութեան երկու պատուական պարգեւներէ զուրկ թշուառներն, որոնք արդարեւ թշուառ պիտի ըլլային, եթէ Քրիստոնէութիւն ու քաղաքակրթութիւն չլանային լեցունել բնութեան թերին, եւ չտային այս անխօս արարածոց խօսք որ ոչ նուազ սքանչելի է քան յօդաւոր բարբառն: Այո՛, այս օրհնեալ երկրի մէջ խուլ համբերն չեն անխօս՝ բառին ընդարձակ նշանակութեամբ, եւ շնորհիւ մարդասէր անձանց կը վայելեն աւելի մխիթարութիւն եւ օրհնութիւն, ո՛րչափ չեն վայելեր անքաղաքակիրթ երկիրներու մէջ անոնք որ լսելու եւ խօսելու գերագոյն պարգեւներով օժտուած են բնութենէն: Արժանի է տեսնել կրթեալ խուլ համբերու իրարու հետ եւ իրենց խնամատարաց ու բարեկամաց հետ նշանացի խօսիլն արագ արագ, ազնիւ եւ զողորմ զգացումներն յայտնելն

ձեռաց ու դիմաց շարժումներով, եւ տեսակ տեսակ նշաններով բարոյական եւ կրօնական վերացեալ գաղափարներ ըմբռնելն եւ բացատրելն այնպիսի յստակութեամբ՝ որ քիչ կը տեսնուի խօսող եւ լսող բանական արարածներէ շատերուն քով: Համբերու միջոցաւ համբերու համար հրատարակուած գիրքեր եւ լրագրեր տեսած եւ մեծ հաճութեամբ կարդացած էի. բայց, ուղիղը խօսելով, յստակ-գաղափար չունէի, եւ դժուարաւ կ'երեւակայէի թէ ինչպէս կարելի էր աղօթք, քարոզ հասկնալի ընել այս անխօս արարածոց, կրօնական պաշտամունք կատարել միայն խուլ համբերու համար այնչափ կանոնաւոր կերպով որչափ կանոնաւոր եւ պատկառելի կերպով չեն կատարուիր թերեւս շատ պաշտամունք որ կ'ըլլան խօսող եւ լսող արանց եւ կանանց համար:

Վերոյիշեալ երէցն տուաւ ինձ իւր եկեղեցւոյն հասցէն, եւ ես առանց կորուսանելու պատեհութիւն, այսօր բարեկամի մը հետ գացի աշուրներով տեսնելու մարդասիրութեան մեծ հրաշքներէն մին, եւ ուրախութեամբ եւ գոհունակութեամբ լի սրտով տուն դարձայ, եւ սկսայ գրել ինչ որ տեսայ:

Եկեղեցին ուր կատարուեցաւ եւ կը կատարուին միշտ կրօնական պաշտամունք խուլ համբերու համար՝ է եպիսկոպոսական եկեղեցի կառուցեալ Նիւ-Եորքի հինգերորդ-վէնի-18րորդ փողոցի վերի ծայրը՝ կից Զիբբրինկ շօլ կոչուած նշանաւոր սրահին, ուր ամէն կիրակի առաւօտ բարոյական եւ երբեմն հակակրօնական ատենաբանութիւններ կ'ընէ նշանաւոր Հրեայ ազատախօհ մը, որ ընկերութիւն մը կազմած է բարոյական գիտութիւն մշակելու առանց կրօնի ուսման եւ ազդեցութեան: Նիւ-Եորքի մեծ սրահներն (որ կ'ըլլան ատենաբանութիւններ) շատ տարբեր չեն եկեղեցիներէ, եւ ունին մեծ երգչոցներ եւ ուրիշ ամէն դիւրութիւններ իբրեւ բողոքական եկեղեցի դորձածուելու: Տասնեւութերորդ փողոցի եպիսկոպոսական եկեղեցին Նիւ-Եորքի բազմաթիւ եպիսկոպոսական եկեղեցիներուն մէջ նշանաւոր ըլլալու համար արտաքին բան մը չունի. անպաճոյճ եւ կոկիկ չէճք մ'է: Ինչպէս Ամերիկայի բոլոր եկեղեցեաց, նոյնպէս եւ այս եկեղեցւոյ ներսը կան վայելուչ

նստարաններ՝ որոց վրայ դրուած են դիմացկուն եւ ընտիր կերպասէ կակուղ բազմոցներ՝ հաւատացելոց հանգստեան համար: Եկեղեցւոյ յատակն ամբողջովին ծածկուած է գորգով, եւ չէնք կը ջեռուցուի ձմեռատեն շոգւով: Դրան վրայ կայ վերնատուն մը՝ որ բաւական յառաջ կուգայ դէպ եկեղեցւոյ կեդրոնը: Խորանը կամ բեմը դրան հանդէպ է եկեղեցւոյ միւս ծայրը: Խորանին մէջ տեղը եկեղեցւոյ պատը կը բաղկանայ գունաւոր ապակիներէ որոց կեդրոնը նկարուած է Քրիստոսի գեղեցիկ մէկ պատկերն բաժակ եւ հաղորդութեան հաց ի ձեռին: Հոգին Սուրբ կ'երեւի աղանակերս եւ երկու կողմը վերն ու վարը՝ չորս Աւետարանիչք իրենց խորհրդանշաններով: Խորանին աջ կողմը գրուած է Հաճեալ լիցան էքքէ, իսկ ձախ կողմը կայ սա խօսքն. « Խաչեալ աշխարհի վրայ »: Խորանին աջ կողմի անկիւնը դրուած է խաչոր երգչոցն, որ համր մնաց ցորչափ համբերու համար կատարուեցան պաշտամունք: Խորանին մէջ տեղ գրուած է սեղան երեք աստիճանաւ: Առաջին աստիճանին վրայ կը կարդացուին ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ. երկրորդ աստիճանին վրայ՝ Յիսուս: Սեղանին վրայ դրուած են ոսկեղէն կամ ոսկեղօծ խաչ մը եւ արմաւենուոյ ռստեր (վան դի ծաղկազարդ է այսօր): Խորանին առջեւ երկու կողմը կան մեծ ջահեր, որ վառուած չէին, եւ Միլըտարան ու պղնձեայ աղաւնի, նշանակ Հոգւոյն Սրբոյ:

Երբ մտանք եկեղեցին, խուլ համբերէն շատերն արդէն եկած եւ իրենց յատուկ տեղերը նստած էին: Խոր ըութիւն կը տիրէր եկեղեցւոյ մէջ, թէեւ աւելի բան յիշուին այրեր ու կիներ սիրով կը խօսակցէին իրարու հետ, եւ երէցը կարգաւ կը տեսնուէր իւր սիրելի բարեկամներուն հետ, եւ, ինչպէս կ'երեւէր դէմքէն, եռանդեամբ կը խօսէր շատ կարեւոր նիւթերու վրայ, ու կը յայտնէր գողտր գագացումներ սիրոյ եւ գոհունակութեան: Եկեղեցւոյ արարողապետներէն մին մեզ մտեցաւ, եւ կարծելով զմեզ խուլ համր, նշանացի առաջարկեց մեզ իրեն հետեւիլ, եւ տարաւ զմեզ խորանին մօտ դնուած նստարաններէն մին: Ժամերգութեան սկսելու քանի մը վայրկեան մնացած էր, եւ երէցը թողլով

իւր բարեկամները, պահարան գնաց զգեստաւորելու համար։ Այս միջոցին խուլ համբերուն երկկողմանիութեամբ պատրաստուեցան պաշտաման, եւ եր'ցն սպիտակ շապիկ մը հագած եւ ուսերէն վար ուրարի նման սեւ բան մը հագած՝ եկաւ յառաջ, եւ սարկաւագ կամ տիրացու մ'անցաւ դրեակալին գլուխը։ Երէցը ձեռքով խօսեցաւ իւր ժողովրդեան եւ ամէնքն յոտին կանգնելով սկսան աղօթքի։ Չարմանալի արագութեամբ եւ ձկուռութեամբ կը շարժէին՝ երէցին ու ժողովրդեան մատուրներն, եւ աղօթից կամ սաղմոսներու եւ երգերու իմաստներուն համեմատ կը փոխուէին դիմաց գծերն եւ մարմնոց դիրքերն։ Եպիսկոպոսական եկեղեցւոյ ժամագրոց մէջ կան այնպիսի մասեր զորս փոխն ի փոխ կը կարգան երէց եւ ժողովուրդ։ Այս մասերն մատանց նշաններով կարդացուեցան այս եկեղեցւոյ մէջ ձիւղայնպէս, ինչպէս տեսած էի միւս Եպիսկոպոսական եկեղեցիներու մէջ յորս երկընդարձակ չէին անխօս անբարբառ։ Տէրունական աղօթքն եւ Առաքելոց Հանգանակն ի միասին (ոչ միաբերան) ըսին երէց եւ ժողովուրդ։ Վերջապէս ամբողջ ժամերգութիւն կատարուեցաւ, եւ բոլոր այս միջոցն մատերու շարժումներէ եւ ջերմեռանդութեան յայտարար դիմաց եւ գլխոց շարժումներէ զատ ուրիշ բան չէր տեսնուեր եկեղեցւոյ մէջ, եւ ձիւ չէր լսուեր։ Խուլ եւ համր ես եւ ընկերս միայն էինք, վասն զի չէինք հասկնար ո՛չ մաղթանք, ո՛չ սաղմոս, ո՛չ երգ եւ ո՛չ պաղատանք։ Երկրպագուք մերթ կը նստէին եւ մերթ ոտքի կ'ելէին գիտնալով նստելու եւ ելլելու ատեններն, իսկ մենք առանց բան մը գիտնալու կը հետեւէինք անոնց օրինակին։ Ժամերգութեան կարգն աւարտելէն ետքը, երէցն սկսաւ քարոզի, ուր բառական երկար տեւեց, եւ, եթէ սխալ չէ գտտել ունկնդրաց դէմքէն, քարոզն էր շատ ազդու եւ պերճ։ Քարոզիչն մատուրներն արագ արագ շարժելէ զատ աչուրները կը դարձնէր մերթ յերկինս եւ մերթ յերկիր, բազուկները կը տարածէր, ձեռուրները կը տանէր գլուխը, երեսը, կը ծեծէր կուրծքը․ միով բանիւ կ'ընէր տասնապատիկ աւելի շարժում եւ ձեւեր բան զոր կ'ընէն շարժումի եւ ձեւի ամենէն աւելի սիրահար ատենաբաններ։

Քարոզը տեւեց աւելի կէս ժամ։ Քարոզէն ետքը երէց եւ ժողովուրդ ծնգաց վրայ եկան եւ ջերմեռանդութեամբ աղօթեցին մատուրներով եւ աչուրներով, եւ կարծեմ ոչ նուազ անկեղծ զգացում եւ սրտաբուղիս իղձեր կը յայտնէին խուլ համբերու մատանց նշաններն քան ուրիշ բարեպաշտներու յողաւոր բարբառները։ Եկեղեցւոյ աւարտելէն առաջ ընկերս եւ ես համբեցինք խուլ համբերն, եւ գտանք ընդ ամէնէն 67 հոգի։ Ահսէն աւելին էր իգական սեռէ եւ տարբեր հասակներէ։ Տասն երկու տարեկանէն մինչեւ 60-65 տարեկան աղջիկներ, կիներ, երիտասարդներ եւ ծերեր կային։ Խուլ համբերէն երկուքն էին սեւամորթ կիներ։

Եթէ սխալ չհասկցայ, այս խուլ համբերը չէին վերաբերեր մասնաւոր հաստատութեան մը, այլ իւրաքանչիւրն եկած էր իւր տունէն հոգեւոր մխիթարութիւն գտնելու, եւ ինչպէս կ'երեւէր, մխիթարուած եւ ուրախ կը դառնար տուն։

Պոլսոյ մէջ երբեմն Լուսաւորչական Հայերէ եւ շատ անգամ Բողոքական Հայերէ գանգատ եւ առարկութիւն լսած եմ Հայոց եկեղեցիներու մէջ Բապտիստ պաշտօններու սովորութեան դէմ։ Սակայն այս առարկութիւնն ընողները կը մոռնան թէ՛ օղորմութիւն, բարեսիրական նպատակներու համար դրամ տալ, քրիստոնէական հոգեւոր պաշտամանց էական մէկ մասը կը կազմէ, եւ Ամերիկայի հարուստ եւ աղքատ եկեղեցիները զայս քաջ դիտնալով ընդհանրապէս տեսակ մը Բապտիստ կը պաշտօնեն կիրակնօրեայ պաշտամանց միջոցին յարմար ատեն մը, եւ այսպէս բաւական մեծ գումարներ կը հաւաքեն։ Երբեմն եկեղեցիներու մէջ կիրակի օրերն երեք անգամ պաշտամունք կը կատարուին, եւ երեք անգամաւ Բապտիստ պաշտօնի։ Թուրքիոյ եւ Ամերիկայի եկեղեցեաց Բապտիստներուն մէջ սա տարբերութիւնը միայն կայ, որ հոս հարուստներն հինգ կամ տասը սէնդի տեղ թալէր, եւ արժանաւոր նպատակներու համար մեծկակ գումարներու մուհակներ (չէ+) կուտան։ Հարուստ եկեղեցիներու մէջ հանդիսաւոր օրեր մէկ անգամի Բապտիստներէ հազարաւոր թալէրներ կը հաւաքուին։ Խուլ համբերն ալ ունէին իրենց Բապտիստները զորս պաշտօն-

ցին երկու երեք պատուաւոր եւ պատկառելի անձեր իրենց մէջէն : Թաղախներէն հասկցուեցաւ թէ խուլ համբերն էին մեծաւ մասամբ աղքատ :

Քաղաքակիրթ աշխարհի ամէն կողմը կիրակի օր մարմնոյ եւ հանդերձի մաքրութեան մեծ ուշադրութիւն կը տրուի , եւ մանաւանդ բողոքական եկեղեցիներու մէջ մաքրութիւնն աստուածապաշտութեան մէկ մասն համարուած է , այնպէս որ կիրակի օրեր եկեղեցիներու մէջ գրեթէ բնաւ չեն տեսնուիր աղտոտ երեսւղ , չսանտրուած մազերով եւ պատառատուն զգեստով այր կամ կին , տղայ կամ աղջիկ : Խուլ համբերու մաքրութիւնն աւելի աչքի կը զարնէր , ամէնքն ալ հազած էին կոկիկ եւ վայելուչ զգեստ , անոնց շապիկներուն օձիքներն եւ

թեւնոցներն էին ձեան պէս սպիտակ . շատերն ունէին մաքուր ձեւնոցներ , եւ ժամերգութեան թէ՛ սկսելէն առաջ եւ թէ՛ աւարտելէն ետքն իրարու հետ կը վարուէին այնպիսի քաղաքավարութեամբ եւ ազնուութեամբ որ հիացում պատճառեցին ինձ :

Սա ալ յիշելու եմ թէ այս խուլ համբերն ընկերութեան եւ իրենց ընտանեաց բնու եղած չեն : Անոնք սովորած են այլ եւ այլ արուեստներ , եւ շատեւր իրենց աշխատութեամբ կը հայթայթեն ոչ միայն իրենց օրապահիկն , այլ եւ հիւանդութեան եւ ծերութեան օրերու համար ստակ կ'աւելցունեն , իրենց նմանեաց կ'օգնեն , եւ ուրիշ բարեսիրական դորձերու մէջ ալ մասն եւ բաժին կ'ունենան :

ԵԱՆՔԻՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Յ Ո Ւ Յ Ա Կ

ԶԱՆՍԶԱՆ ԱՐԱԳՈՒԹԵԱՆՅ

Անգլիացի նշանաւոր գիտուն մը , Պ. Ճէյմս Ճաքսըն , ցուցակի մը մէջ ամփոփած է բազմաթիւ երեւութից զանազան արագութիւնները : Այս արագութիւնը հաշուած են մէն մի երկվայրկեանի մէջ մէթրի չափով : Եւ որովհետեւ ցուցակն յոյժ շահագրգիռ է եւ կարեւոր տեղեկութիւններ կը պարունակէ , արժան կը դատենք մեր ընթերցողաց ներկայել զայն , քաղելով Գիտական Հանդէսի մէկ վերջին թիւէն :

Երկրի անկումն դէպ արեգակն	0,005
Մարմնոյ մը անկումն Լուսնի մակերեւոյթին վրայ , մէկ երկվայրկեան անկումէ յետոյ	1, 61
Մարմնոյ մը անկումն Հրատի մակերեւոյթին վրայ , մէկ երկվայրկեան անկումէ յետոյ	5, 45
Մարմնոյ մը անկումն Արուսեակի մակերեւոյթին վրայ , մէկ երկվայրկեան անկումէ յետոյ	4, 41
Մարմնոյ մը անկումն Պոսիդոնի մակերեւոյթին վրայ , մէկ երկվայրկեան անկումէ յետոյ	4, 67
Մարմնոյ մը անկումն Փայլածուի մակերեւոյթին վրայ , մէկ երկվայրկեան անկումէ յետոյ	5, 23
Մարմնոյ մը անկումն Երկրի մակերեւոյթին վրայ , մէկ երկվայրկեան անկումէ յետոյ	9, 81
Մարմնոյ մը անկումն Երկրի մակերեւոյթին վրայ , երկու երկվայրկեան անկումէ յետոյ	19, 62
Մարմնոյ մը անկումն Երկրի մակերեւոյթին վրայ , 100 մեթր անկումէ յետոյ	44, 29
Մարմնոյ մը անկումն Ուրանոսի մակերեւոյթին վրայ , մէկ երկվայրկեան անկումէ յետոյ	10, 50

Մարմնոյ մը անկումն Երեւակի մակերեւոյթին վրայ, մէկ երկվայրկեան անկումէ յետոյ	10, 80
Մարմնոյ մը անկումն Լուսնթագի մակերեւոյթին վրայ, մէկ երկվայրկեան անկումէ յետոյ	24, 47
Մարմնոյ մը անկումն Արեգական մակերեւոյթին վրայ, մէկ երկվայրկեան անկումէ յետոյ	269, 77
Լուսնի շրջանն երկրի բոլորտիքը (Հեռաւորագոյն կէտ)	970, 0
Լուսնի շրջանն երկրի բոլորտիքը (մերձաւորագոյն կէտ)	1080, 0
Շրջան Լրատի երկրորդ արեւնեակին (Տէյմոս)	1157, 0
Կէտի մը արագութիւնն արեգական հասարակածին վրայ	2028, 0
Արագութիւնն զոր պէտք է տալ մարմնոյ մը՝ լուսնոյ ձգողութենէն դուրս նետելու համար զայն, ըստ Լապլասի	2396, 0
Պատիւոնի շրջանն արեգական բոլորտիքը	5390, 0
Արեգական տեղափոխումն գէպ ի Վահագնի համաստեղութիւնն	7642, 0
Երեւակի շրջանն արեգական բոլորտիքը	7584, 0
Արագութիւնն զոր պէտք է տալ մարմնոյ մը՝ երկրի ձգողութենէն դուրս նետելու համար զայն, ըստ Ֆրամարիոնի	11700, 0
Լուսնթագի շրջանն արեգական բոլորտիքը	12924, 0
Երկրիս » » »	29516, 0
Արագութիւնն զոր պէտք է տալ մարմնոյ մը՝ արեգական մակերեւոյթին վրայ՝ արեգակնային ձգողութենէն դուրս նետելու համար զայն, ըստ Եռնկի եւ Ֆրամարիոնի	608000, 0
Արեգակնային ժայթքումն, ըստ Սէզգիի	900000, 0
Փայլակը՝ արեգական բիծի մը մէջ, ըստ Բէյէրի (Նաբոլի, 1845)	200000000, 0
Հեռադիտական յատուկ շարժում հիւսիսային աստղի (ալֆա փոքր Արջի)	1500, 0
Հեռադիտական յատուկ շարժում վէլայի (ալֆա Բնար համաստեղութեան)	11000, 0
Սֆէրէ-սփէրէ գործիքի յատուկ շարժում Այծի	+2000, 0
Հեռադիտական » » »	47100, 0
Սովորական շարժումն արեգակնային մթնոլորտի	30000 էն 65000, 0
Աստղը	12000 էն 71000, 0
Գիսաւոր աստղ Հալլէյի, Հեռաւորագոյն կէտ	3, 0
» » » մերձաւորագոյն »	395000, 0
1882ի գիսաւորն մերձաւորագոյն կէտին, ըստ Սգիարարէլլի	480000, 0
Շողածիգ (պլէյ) 1864 մայիս 14ի, օգտքոր Օրկէյի (Թարն - է - Կարոն), ըստ Լոստայի	20000, 0
Շողածիգ 1868 սեպտեմբեր 5ի, Աւստրիայէն ի Ֆրանսա	88000, 0
Մեծագոյն յառաջացում՝ Սառուցեալ ծովու, ըստ Թայնտոլի	0,0000099
» » » Եաքոպոհայն սառնակոյտին (Կրոնէնլանտա)	0,00026
Սրնթաց գետ	4, 0
Հեղեղը վերին Ալպեանց	14, 28
Անձրեւի կաթիլը, ըստ Րոպէի	11, 0
Աճեցուն արագութիւնն մակընթացութեան ի Սէն - Մալօ (Ֆրանսա)	0,000111
13-33 մեթր բարձրութեամբ մակընթացութեան ատեն	6, 82
30 մեթր լայն եւ 300 մեթր խոր կոհակ	21, 85
Մրրկայոյզ կոհակ Ովկիանոսի մէջ	294, 0
Ծաւալումն մակընթացութեան, Քրաքաթոայի երկրաշարժէն յառաջ եկած, 1883 օգոստոս 27ին • Քրաքաթոայէն ի Քոլոն, ըստ Պուքէ տը Լա Կրիի	

Ծաւալումն մակընթացութեանց շարժման խաղաղական Ովկիանոսի	
Հարաւակողմն . բարձրագոյն թիւ , ըստ Ուիլիլի	800, 0
Սովորական հով	5 5/8 6, 0
Օդոյ քաղողութիւն ծխնեղոյզաց	3 5/8 5, 50
Բարեյարմար հով՝ հողմաղացքի համար	7, 62
Քամի	10, 0
Մրրիկ	25 5/8 50, 0
Ուրական	40, 0
Ուրական որ արմատախիլ կ'ընէ ծառերը	45, 0
Տեղափոխումն մրրիկի , 1881 սեպտեմբեր 21 ին , Գահորէն ի Բրատէ	
(194 հազարամէթ մէկ ժամու մէջ)	54, 17
Թաթար Ուէլլինֆորտի (Գոննէքթիքը), 1882 մարտ 22 ին	115, 78
Մթնոլորտային հոսանք, Քրաքաթոայի երկրաշարժէն յառաջ եկած 1885	
օգոստոս 27 ին . Քրաքաթոայէն ի Բեդերապուրկ , ըստ Րիքաչովի	303 5/8 334, 0
Երկրաշարժարժական ցնցում Վիէթի , 1855 յուլիս 15 ին . Վիէթէն ի	
Սթրազպուրկ , ըստ Օթթօ Վօլկէրի	872, 0
Մրրիկ արեգակնային մթնոլորտի , ըստ Եոռնիկի	402000, 0
Մարմնոյ մը անկումն՝ 10 երկվայրկեան անկումէ յետոյ	98, 09
Վեգուվէն ժայթքեալ քարեր	406, 0
Թէնէրիֆի չափի հրաբուխէն ժայթքեալ քարեր	975, 0
Ծաւալում խոնաւ լաւադի մէջ պայթման մը բաղխման	289, 86
Տեղական արագութիւն երկրաշարժական կոհակի մը՝ խիտ կրանիթի	
մէջ , ըստ Էոռնիկի	2450 5/8 3650, 0
Ձայնի արագութիւնն օդոյ մէջ (+ 10°)	337, 20
» » ջրոյ » (+ 8 , 1)	1455, 0
» » անդիկի » (+ 10)	1484, 0
» » արծաթի »	3060, 0
» » պղնձի , կաղնեփայտի մէջ	3628, 0
» » փեկոնի փայտի »	4250, 0
» » եղեւնի » »	5440, 0
» » երկաթի , պողպատի , ապակիի մէջ	5668, 0
» » արեգական մակերեւոյթին վրայ	6591, 0
Ելեկտրականութիւն . ընդծովեայ հեռագրաթիւ	4000000, 0
» » օդային »	36000000, 0
Վոլթայեան հոսանք հեռագրական շղանակի մը մէջ	11690000, 0
Ազդեցութեամբ յառաջ եկած ելեկտրականութիւն	18400000, 0
Արագութիւն լուսոյ (քարիւղ) , ըստ Քորնիւի	298776000, 9
» » (արեգակն հորիզոնի մօտ) ըստ Քորնիւի	300242000, 0
» » (կիր) , ըստ Քորնիւի	300400000, 0
» » (ելեկտրական լոյս) , ըստ Ժոռնիկի եւ Ֆորայի	301582000, 0
0.0017 մէթր արամագծով պղնձէ թելի մը մէջ , Լէյտեան շիշի մը	
պարսպուեցէն յառաջ եկած հոսանք	465500000, 0
Աճումն պահուած ծառին	0,000072
Արեան շրջանն նորածին գորտին պոչին մէջ	0,00032
» » մարդու աչաց ցանցէն ոչնչ մաղային խողովակաց մէջ	0,00075
» » շան մայր-երակին մէջ	0,40
Ձգացմանց փոխանցումն մարդու երակաց մէջ	33, 0
Խխուճի	0,00115
Թռիչ շերամի որդի արուն , ըստ Բէթթիկրիւի	1, 86

Պայթումն որոտող կապի (Ջրածինն եւ թթուածինն), ըստ Պէրթլըյի	2500, 0
» բաւականաւ վառողի, ըստ Ապէլ եւ Նոպէլի	5180 էն 5790, 0
Սկզբնական արագութիւնն հողմաւոր հրացանի գնտակին (100 մթնո- լորտի ճնշում)	206, 0
Մէկ մթնոլորտի ճնշումը դատարկութեան մէջ թող տրուած օդ-	395, 0
երեք » » օդոյ մէջ թող տրուած շոգի	500, 0
Մէկ » » դատարկութեան մէջ թող տրուած շոգի	582, 0
	ՀԱՍՈՒՄԱՂ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՄԱԲԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

6-12 ԱՊՐԻԼ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Անգլիոյ և Ռուսիոյ յարաբերութիւնը յոյժ ձգտեալ են, Ռուսիոյ մերժողական պատասխանին պահճառաւ որով չուզէր քննութիւն մը բանալ Բէնչտէհի դէպքին վըրայ, ինչպէս կը պահանջէր Անգլիա:

— Պայթումն եկող անգլ. շոգեւնաւու մը նաւապետն իմացուցած է Թայմըի թղթակցին ի Կ. Պոլիս՝ թէ զինուորական յոյժ գործօն պատրաստութիւնը կը կատարուին հոն: Պայթում լի է զինուորներով, եւ յայտնի կերեւի թէ Ռուսք մեծ ոյժ մ'ունին մօտակալներն, ի հարկին անգլ. յարձակման մը դէմ պաշտպանելու համար Բոթի—Տփղիսի երկաթուղին: Երկու մեծ փոխադրանաւեր զինուորական մթերք և ռազմանիւթ կը հանէին ի Պայթում, եւ ցամաքին վրայ շատ մը գործաւորք եւ զինուորք մարտկոցներ կը շինէին:

— Լորտ Ուոլտի զօրավարն Ափրիկէի եզերքէն Լոնտոն կոչուած է Հնդկաստան զօրք զրկուելուն առթիւ:

— Պուխարայի Էմիրը կը պատրաստուի փակել իւր սահմաններ, երբ պատերազմ ծագի, և դադարեցնել ամեն հաղորդակցութիւն ընդմէջ Աֆղանաց եւ Պուխարացւոց: Այս միջոցը ձեռք կառնուին Ռուսիոյ դրդմամբ:

— Թայմըի Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ ապրիլ 14 թուով. «Թուրքերն ուշադրութիւն կը դարձունեն Հայաստանի սահմանադրւոց վրայ: Մեծ քանակութեամբ զինուորական մթերք, դաշտային թնդանօթ

եւ ռազմանիւթ այս օրերս զրկուեցան Տըրապիզոն. մարշալ Մուխթար ու Հագգը փաշաները Կարին զրկուեցան՝ զօրքերն աչքէ անցունելու և բերդերն ամրացնելու»:

— Աֆղանստանէն Անգլիոյ լրագրաց հաղորդուած նորագոյն լուրն այն է թէ Մուլաներն ընդհանրապէս ձիհատ այսինքն կրօնային պատերազմ կը բարոզեն մզկիթներու մէջ ընդդէմ Ռուսիոյ, եւ իրենց քարոզիչները կ'ծու խօսքերով կը պարսաւեն ռուս սպայից և զինուորաց ընթացքն, որք Կեդրոնական Ասիոյ այլ եւ այլ կողմերն անպատկառ կերպիւ վարուած են Իսլամ կանանց հետ:

— Վիէնայի լրագիրք սաստիկ մտահոգութեամբ կը յիշեն Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Պ. Կիրսի հրաժարման լուրն եւ կ'ըսեն թէ այս հրաժարում, որուն պատճառ տուած է զինուորական կուսակցութիւնը, պիտի փութացնէ Անկլո-ռուս պատերազմը:

— Լորտ Ուոլտի և իւր սպայք, կը գրէ Էսթէքէ, շատ գովեստիւք կը խօսին Պայուտայի անապատին կլիմային վրայ, ուր Սքուարդ հանդուցեալ զօրավարը կ'ուռեցաւ քանիցս Արաբաց հետ, եւ կը ծանուցանեն թէ տակաւին այն կողմերը գտնուող անգլիացի զօրաց առողջութիւնը կատարեալ է: Լորտ Ուոլտի կըսէ թէ Սուտանի կլիմային նկատմամբ տրուած ամեն անընդհատ տեղեկութիւնը անհիմն ելած են:

Ն Ե Ր Ք Ի Ն

Շուէտի թագաւորին որդի՝ Շարլ իշխանն ապաքինած լինելով իւր հիւանդութենէն, զինք խնամող բժշկաց խորհրդով երկուշարթի օրը մեծ Աղզի կերթայ օդափոխութեան համար:

Սոֆի թագուհին մայրաքաղաքս կը գտնուի դեռ եւ իւր կրտսեր որդւոյն, Էօթէն իշխանին հետ ամեն օր կայցելէ Պոստոյ այլ եւ այլ կողմերն:

— Ֆրանսական դեսպան տը Նօայլ մարքիւր տիկնոջն հետ մայրաքաղաքս վերադարձաւ Փարիզէն:

— Էքսերէս քաղաքական տեսութեան մը մէջ կըսէ որ եթէ Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ պատերազմ ծագի, Թուրքիա բոլորովին չէզոք զիրք մը պիտի բռնէ:

— Կայսերական անձնական դանձուն նախարարութեան առաջարկութեամբ, Հանքաց վարչութեան առաջին երկրաչափ Վէյս էֆէնտի Քէօթահեա զրկուեցաւ, Քիւտուս գաւառակի մէջ գտնուող Կանքին յատկազիծը պատրաստելու համար:

— Փիլիպէի լրագիր սա ուշադրութեան արժանի լուրը կը հրատարակեն թէ Արեւելեան Րումէլիի կառավարութեան Սնտուկէն 3,500 ռակի տրուած է Մակեդոնիոյ մէջ ապստամբութիւն մը հանելու համար աշխատող սլուլարական մասնախմբին:

— Անցեալ չարթու քանի մ'անձինք՝ որք ի սկզբան հրեայ կը կարծուէին, Գատըզիլի մէջ փայտեայ խաչ մը ձեւացնելով եւ աղտեղութեան մէջ թաթխելով, յոյն նպարավաճառի մը խանութին վրայ կախած էին: Յունաց ռամիկ դասը զայս տեսնելով, սաստիկ զայրացած հրէից թաղին վրայ յարձակեցան, եւ շատ մը հրեայներ քանակոծեցն եւ հրէից տուներ քարկոծեցին: Այս դէպը բաւական յուզում պատճառեց մայրաքաղաքիս ամեն կողմն, բայց ի վերջոյ կրցաւ առաջն առնուիլ շնորհիւ ռափկանութեան ջանից: Արքայազնութեան հեղինակներն ինչպէս եւ զրգուութեան շարժառիթ եղող անձինք ձերբակալուած են:

Ա Ղ Դ Ա Յ Ի Ն

Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ Բ. Կարգի Մէճիտիյէ պատուանշան ընծայել Պատրիարքական Գեր. Տեղապահ Հօր եւ Գ. Կարգի Մէճիտիյէ՝ Ազգ. Պատրիարքարանի գործակատար Ֆրէնկեան էֆէնտիի:

— Նորընտիր Պատրիարք Ամեն. Յարութիւն Սրբազան ամսոյս 7ին մեկնած է Յոպպէէն եւ մայրաքաղաքս կը հասնի յառաջիկայ երկուշարթի առաւօտ: Ընդունելութեան համար կարգեալ Յանձնախումբ մը մեծ գործունէութեամբ կ'աշխատի ձեռք առնուլ ամեն կանխահոգ միջոցներ, արժանավայել չքով ընդունելու համար զՍ. Պատրիարքն:

Լոյտի ընկերութենէն վարձուած է Ժէֆֆէր չոքենաւն որ այս իրիկուն կը մեկնի ի Տարտանէլ, տանելով եկեղեցական դասուն, Վարչութեան, Ազգ. Ժողովոյ եւ Պատրիարքարանի կողմէ կարգեալ հրաւիրակներ, ինչպէս եւ այլ բաղում սպգայիններ որք զՍ. Պատրիարքն ընդունելով ի Տարտանէլ, Կ. Պոլիս պիտի բերեն հանդիսաւորապէս, Ժէֆֆէր չոքենաւով:

— Կարնոյ առաջնորդարանն, եւ Կարնոյ, Բաղլըյ եւ Փարբերդի կուսակալութեանց մէջ եղող իրր տանեւհինգ առաջնորդարանք ընդունած են Ս. Էջմիածնայ Սինոդի հրաւիրագիրը ռուսական հիւպատոսին ձեռօք, եւ շատերն արդէն պատասխանած են Կեղրոնական Վարչութեան հրահանգին համաձայն, թէ իրենց մասնակցութիւնը Սահմանադրութեան համեմատ Կեղր. Ընդհանուր Ժողովոյ միջոցաւ կը գործադրուի:

— Արժ. Տ. Մկրեան Հայրն, որ ինչպէս արդէն ծանուցած ենք, յատուկ պաշտօնով Ս. Էջմիածին կ'ուղեւորի, անցեալ չարթու օր մեկնեցաւ մայրաքաղաքէս: Ն. Արժանապատուութիւնն հինգշաբթի իրիկուն Պատու հասած է եւ այսօր Տփղիս կը ժամանէ:

ՎԵՐՋԻՆ ՀԵՌՈՒՄԻՐԱԼՈՒՐԻՔ

Լեւոնի, 20 ապրիլ

Կալիֆորնիայի լրագրողը կը ծանուցանեն թէ մեծամեծ ամբողջութիւնը կը կառուցուին Փիէ-վի մօտ, ի Ռուսիա, և 50,000 զօրք կը համախմբին հոն, (ի նախատեսութիւն անգլո-ռուս պատերազմին, որում Աւստրոյ-Հունգարիա ևս կրնայ մասնակցիլ):

Լոնտոն, 20 ապրիլ

Տէյլէ Նեւ-ը կը յայտարարէ թէ Բէնչտէհի Ռուսիոյ թողման լուրն երեւակայական է: Նախարարք այս առուր Խորհրդին մէջ պիտի քննեն Սըր Լըմստէն զօրավարին հետագրերը Բէնչտէհի գործին վրայ, ինչպէս նաև Բեդրսպուրկի դեսպան Սըր Թորնդընի ղեկուցադրերը:

Տէյլէ Նեւ-ը կը յարէ թէ աֆղանեան խնդիրն այնպիսի վիճակի մը մէջ է յորում տակաւին անհրաժեշտ է փութապէս յառաջ մղել զինուորական պատրաստութիւնները:

Բեռլին, 21 ապրիլ

Բեռլինը Լոյս կը յայտարարէ, ստոյգ աղբիւրէ առնելով, թէ Թուրքիա նեղուցներու խնդրոյն վրայ ո՛ր և է խոստում չէ տուած դեռ Անգլիոյ կամ Ռուսիոյ:

Պրուսէլ, 18 ապրիլ

Քրոէնհակէ (Տանիմարքա) կը հեռագրուի թէ փութոյ պնդութեամբ կ'ամբողջացունեն ծովեզերեայ ամբողջութիւնը, ի նախատեսութիւն անգլո-ռուս պատերազմին ի Պալ-թիկ: Քրուսի թնդանոթներ և ռումբեր յանձնարարուեցան հրետանեաց համար: Հինգշաբթի օր Լոնտոնէ հեռագրեր եկեր են, նաուդիւններ խնդրելով Տանիմարքայէն անգլիական նաւատորմին համար, որ կիւրակի օր Տանիմարքայի ջուրերը սխալ մտնէ:

Գահիրէ, 18 ապրիլ

Պաշտօն Էթէբէէն լրագրոյ տպարանին փակման նկատմամբ Փրանսական կառավարութեան ծանուցագիրն հասաւ Նուսպար փաշայի ձեռք: Ծանուցագիրը կը պահանջէ բռնի փակուած յիշեալ տպարանին բացումն անպայման կերպիւ, և պատժումն այն ոստիկանաց որք բռնի մտած էին Փրանսացի հպատակի մը չէնքին մէջ: Ծանուցագիրը Պաշտօն Էթէբէէն լրագրին վերաբացումը չի պահանջեր: Այն մասին բը-

նաւ բան մը չըսեր: Թերթին տնօրէնն ինք անհատապէս դատ բացած, միջազգային դատարանին առջեւ: Գահիրէի Փրանսական դաղթականութիւնը շատ գոհ է Բարիզի կառավարութեան բռնած ազդու ընթացքէն:

Լոնտոն, 19 ապրիլ

Գահիրէէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ եգիպտական կառավարութիւնը, Անգլիոյ սաշտպանութեան ապաւինելով, մերժած է Փրանսայի պահանջումները Պաշտօն Էթէբէէնի խնդրոյն նկատմամբ:

Բեդրսպուրկ, 19 ապրիլ

Սրբոց Կիւրեղի և Մէթոտիոսի հաղարամեակն երէկ մեծ շքով տօնուեցաւ: Կայսրն և Կայսրուհին և կայսերական գերդաստանին բոլոր անդամք, պատարագին ներկայ էին Ս. Իսահակի Մայր Եկեղեցւոյն մէջ: Համայն մայրաքաղաքին մէջ ապա անագին թափոյր մը կազմուեցաւ, զանգակներու ձայնով, և թափոյրն ուղղուեցաւ դէպ ի Քալանի Մայր Եկեղեցին:

Բեդրսպուրկ, 17 ապրիլ

Պետական խորհուրդն սկզբամբ եւեթ ընդունեց տոկոսի կործններուն վրայ տուրք մը դնելու առաջարկը, զոր մատուցած է Պ. Պունկէ, նախարար ելեւմտից: Ծրագրին յօդուածները պիտի վերաքննուին:

Լոնտոն, 28 ապրիլ

Տէյլէ Նեւ-ը կը հաւաստէ թէ Անգլիոյ և Ռուսիոյ յարաբերութիւնը յոյժ ձգտեալ են, Ռուսիոյ մերժողական պատասխանին պատճառաւ, որով չուզեր ըննութիւն մը բանալ Բէնչտէհի դէպքին վրայ, ինչպէս կը պահանջէր Անգլիա:

Սաւաթար կը կարծէ թէ Բէնչտէհի դէպքին վրայ երկուց կառավարութեանց միջեւ վիճաբանութիւնը ժամանակ մը պիտի տնեւէ:

Աթէնք, 23 ապրիլ

Թագաւորը Քորֆուէն վերադառնալուն պէս, երկար խորհրդակցութիւն մ'ունեցաւ Պ. Թրիքուքիի հետ: Վաղը պիտի կոչէ զՊ. Տէլիեանի:

Տարակուսելի է թէ, Երեսփոխանական ժողովոյ գումարումէն առաջ, Պ. Տէլիեանի ընդունի նոր նախարարութիւնը կազմելու պաշտօնը:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ՈՒՂԵԽՈՐՈՒԹԻՒՆՆ
Ի Հայաքնակ գաւառս Արեւելեան
Տաճկաստանի

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Սարէն եւ Զորէն, Հնէն եւ Նորէն
պիտանի գիտնոց

ՄԱՍՆ Բ.

Պարունակութիւն

Զօն առ Խրմեան Հայրիկ. — Դիր առ
ընթերցողս. — Յառաջարան. — Նամակներ
այլ և այլ անձանց. — Վերջին հրաժեշտ եր-
ուանդունիքէն (Հայոց Զորէն). — Վերին Խօ-
շապ (գաւառ). — Նոյայ տապանն. — Խրիմ-
եան Հայրիկի այցն այն տապանին. — Քա-
րացեալ հովիւ և ոչխար. — Բութայ Ս. Աստ-
ուածածին վանքն. — Զէյնիս հին գիւղի նոր
ձերուկն. — Աղբակ գաւառն և վանօրայքն.
— Սկզբնամուտն ի յԱղբակ Բարգուղիմէոս
Սրբազան Առաքելոյն ի ժամանակն կռապաշ-
տութեան և Նախաքարոզութիւնն յԱրիփա-
նոս քաղաքի. — Սիկալ իշխան. — Բերդն եւ
Վարժաւորնէ դուստր. — Հետաքրքիր և լու-
սատու աւանդութիւնք. — Բնութեան հրա-
շալիքն. — Վիշուլ քաղաքի և առասպել մը.
— Պաշտօնէ՛ պատմական հին բերդաքաղաք.
— Մայտանսկայ Սարի Աստուածածին. —
Կենդանի Հայր-Արրահամ և Սառան. — Խօ-
շապ պատմական հին բերդաքաղաք. — Ներ-
քին Խօշապ (գաւառակ). — Վան-Տոսպ (ըն-
դարձակ գաւառ). — Վարազայ վանքն եւ
Խրիմեան Հայրիկ. — Վերին վարազ և Գա-
լիւան. — Առսաւորչայ խաւարած վանքն.
— Շուշանց և Շուշանիկ՝ դուստր Սենեքե-
րիմ Սրբայի. — Կարմրուորայ Ս. Աստուածա-
ծին. — Արտամետ՝ Ալանաց դուստր Սաթին-
կան Ալնանոց. — Կուռնիկ վանքն. — Մկատան
և հնութիւնքն. — Սուրբ Խաչի վանքն. —
Բզնունեաց ծովն վայ վայ Բաւաւան. — Սա-
թուն Տիրամօր վանքն, աւանդութիւնն. —
Ս. Աստուածածին մի այլ վանք. — Յանձնա-
րարող վերջարանական մը հաւատարմու-
թեան դրուշով կնքուած :

Ա. Զ. Դ.

Գ. Մ. ԱՍԼԱՆԵԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱԺԱՐԱՆԱՑ

Ազգային առաջնակարգ վարժարանաց
համար անհրաժեշտ եղող սոյն ընտիր դա-
կազիրքը կը գտնուի բոլոր գրաւաճառաց
քով: Կեդրոնատեղին է Հայոց Միացեալ
Ընկերութեանց գրասենեակն, Կալաթա,
Կէօջէ-օղլու խան, Թիւ 12: Գինն է 20 դա-
հեկան: Շատ գնողաց գոհացողիչ զեղչ:

Ա. Զ. Դ.

Հաւ ձեռագործ գիտցող և այլևայլ
ուսմանը հմուտ վարժուհի մը, որ ազ-
գային վարժարանաց մէջ յոյժ գոհա-
ցուցիչ կերպիւ պաշտօններ վարած է,
կը փափաքի ազգային վարժարանի մը
կամ պատուաւոր տան մը մէջ վար-
ժուհւոյ պաշտօն վարել:

Պէտք ունեցողք կրնան դիմել Ա.
րեւելքի Խմբագրատունը:

ՃԱՇԱԿ

ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԱՂԿԱՔԱՂ

ՅԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԷ

Բ. ՏԿՐՈՒՄԷՆ

Ա. Մասն ի գին 5 դր.

Բ. » » 7 »

Երկու մասերն միասին կազմեալ, թղթա-
կազմ 12 դր: Երկու մասերն միասին կազմ-
եալ, քառթմոն կազմ 15 դր:

Առաջին մասն առանձին չը ծախուիր:
Կեդրոնատեղին է Եւրոպական Գրարան,
հեղինակին քով, Յակոբեան խան Թիւ 14:
Բոլոր գրաւաճառաց քով ալ կը գտնուի:

ՊԱՏՄԱԿԱՆ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԵՒ

ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ն. ՃԻՎԱՆԵԱՆԻ

Սոյն ամենաօգտակար բառգիրքն անհրաժեշտ է ամեն լրագիր ընթերցողաց, դրոշմաւորաց, ուսումնականաց և անուսից կը պարունակէ ժամանակագրական և պատմական ծանօթութիւնք աշխարհի գլխաւոր դիւպաց—անուանք համօրէն տէրութեանց գլխաւոր քաղաքաց՝ վիճակագրական և պատմական ծանօթութեամբք, գետոց, լեռանց եւայլն.—անուանք կենսագրական համառօտ ծանօթութեամբք բոլոր պատմական հին և նոր նշանաւոր արանց, թագաւորաց, հեղինակաց, յիշատակութեամբ իրենց գլխաւոր հեղինակութեանց—Շար Կաթողիկոսաց հայոց Դարձեալ բացատրութիւնք իցարանական և փոխարեքական ասացուածոց եւ եւ։

Սոյն գիրքը, թէ և քանի մը տարի է ի վեր հրատարակուած է և գինը բաղդատմամբ նմանօրինակ ուրիշ հրատարակութեանց ոչսուղ, սակայն և այնպէս ընթերցասիրաց աւելի գիրամատչելի լինելու համար 40 զրուէն այս անգամ 30 զրուէի իջեցուցած է հրատարակիչը՝ Պ. Վ. Մարգարեան, որ կը յուսայ թէ շնորհիւ այս զոհողութեան, բոլոր անոնք որք զնոյն բարձրութեանը համար կ'առարկէին, պիտի փութան գնել մէկ մէկ օրինակ ի քաջալերս հայ գրականութեան։

Կը գտնուի գլխաւոր գրաւաճառաց քով և Պահճէ Գաբու ջրաւաճառ Սրթին և Պողոս աղայից խանութները։

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՀԱՅ—ԴԱՂՂԻՍՏԱՆ

Ի Ա. ՆԱՐ—ՊԵՅ ԼՈՒՍԻՆԵԱՆԷ

ՏԻՊ

Տպագրեալ է Փարէզ

Գրական յառաջադիմութեան ուստաբելու և ազգին ուսանող պատանեկութիւնը քաջալերելու բարի նպատակաւ, մեծանուն հեղինակը բարեհաճած է 25% զեղջ ընել

իր վերոյիշեալ աշխատութեան գնոյն վրայ, որ իր տեսակաւն միակ և պատուականաւ գոյն գործ մ'է Հայ մատենադարանին մէջ։

Գին հաշիւը օրէ ալ, փետրուար 20 15 ֆրանկ

Յիշեալ գիրքին վաճառման ընդհանուր գործակալութիւնն այսուհետեւ յանձնուած է առ Ե. Վրոյր և Ընկ. Թղթաւաճառ ի Կալաթա, Քոմիտիօն խանին դուրսը, թ. 23։ Չափաւոր տասանորդով կը վաճառուի մեծ քանակութեամբ գնել ուզող գրաւաճառաց։ Ազգային հաստատութիւնք, նոյնպէս և վերկայեալ կարօտ սեւանողը իրաւունք ունին տրժանաւոր զեղջ մը ստանալ որոշեալ գրանոյն վրայ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Պ. Լ. ՔԱՌՔԻ ՄԵՐՈՒԹԻՒՆԵՐ

ՖՈՐԹԻՒՆԷՆՆԻ ՏԻՊՈՒՄԿՈՒՆԷ

Իւթիւճեան Կարապետ էֆէնտիի թարգմանութեամբ Արեւելքի մէջ իբրեւ թերթի հրատարակեալ այս հետաքրքրաշարժ և միանգամայն հրահանգիչ վէպին ամբողջ չորս հատորները կազմուած կը վաճառուին մայրաքաղաքիս ամեն հայ գրաւաճառաց քով, և կամուրջին գլուխը ջրաւաճառ Պողոս և Յակոբ աղաներու խանութները։ Չորս հատորին գինն է 20 զրուէ։

Նոյն տեղերը կը վաճառուին նաեւ Կ Ս Իւթիւճեան էֆէնտիի հետեւեալ թարգմանութիւնք.

Թ.Ս.Փ. ՀՐԵԱՅ Բ. տպագրութիւն պատկերազարդ Ա. հատոր	գին զրէ 30
ՅԵՐԿԻԷ Ի ԼՈՒՍԻՆ	» » 7 1/2
ՄԱՐԲԵՋՈՒՆԻ	» » 7 1/2
ԸՆՏԱՆԵՋՈՒՐԿ 2 հատոր	» » 15
ԿԱՐՄԻՐ ՄԱՐԴՈՅ ԵՐԴՈՒՄԸ	
2 հատոր	» » 12
ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ ՓԱՐԻՋԻ	» » 6

Արտօնատէր Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ